European Commission against Racism and Intolerance
Commission européenne contre le racisme et l'intolérance

CRI(2011)1
Version arménienne
Armenian version

ՌԱԵՀ-ի զեկույցը Հայաստանի մասին

(մոնիտորինգի չորրորդ փուլ)

Ընդունվել է 2010թ. դեկտեմբերին

Հրատարակվել է 8 փետրվարի 2011 թ.

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

ECRI Secretariat
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F-67075 STRASBOURG Cedex
Tel.: + 33 (0) 388 41 29 64
Fax: + 33 (0) 388 41 39 87
E-Mail: combat.racism@coe.int

www.coe.int/ecri

ՌԱԵՀ-ի զեկույցը Հայաստանի մասին
(մոնիտորինգի չորրորդ փուլ)

Ընդունվել է 2010թ. դեկտեմբերին
Հրատարակվել է 8 փետրվարի 2011 թ.

Խնդրում ենք հաշվի առնել, որ սույն փաստաթուղթը թարգմանություն է: Որոշակի վիճահարույց հարցերի դեպքում հղումը պետք է արվի փաստաթղթի բնագրային՝ անգլերեն և ֆրանսերեն տարբերակների վրա:

Ցանկ

Նախաբան **7**

ամփոփագիր **9**

եզրակացություններ և հանձնարարություններ **13**

I. Իրավական դրույթների առկայությունն ու կիրառումը 13

Միջազգային իրավական փաստաթղթեր 13

Այլընտրանքային ծառայության մասին օրենքը 14

Քրեական իրավունք 15

Քաղաքացիական և վարչական իրավունք 17

Խտրականության դեմ պայքարող մարմին 18

Դատական համակարգի, իրավապահ մարմինների աշխատակիցների և փաստաբանների վերապատրաստումը 19

II. Խտրականություն տարբեր բնագավառներում 20

III. Կարծիքների մթնոլորտը, լրատվամիջոցները, քաղաքական քննարկումներ 21

IV. Ռասիստական պատճառներով կատարված բռնություններ 24

V. Խոցելի /Թիրախային խմբեր 24

Ազգային փոքրամասնություններ 24

Կրոնական փոքրամասնությունները 31

Ոչ քաղաքացիները 33

- *Փախստականներ և ապաստան փնտրողներ* 33
- *Այլ կարգի ոչ քաղաքացիներ* 37

VI. Քաղաքացիության հետ կապված հարցեր 37

VII. Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագիծը 38

VIII. Ռասիզմի և ռասայական խտրականության դիտարկում 38

IX. Կրթություն 39

Միավանկյալ աղխաղմանխիհաղության աեահահկաղթյաղնների **41**

մակենագիկաղթյաղն **43**

Նախաբան

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) հիմնադրվել է Եվրոպայի Խորհրդի կողմից: Այն մարդու իրավունքների մոնիտորինգի անկախ մարմին է՝ մասնագիտացած ռասիզմի և անհանդուրժողականության հետ կապված հարցերի գծով, կազմված է անկախ և անկողմնակալ անդամներից, որոնք առաջադրվում են իրենց բարոյական հեղինակության և ռասիզմի, օտարատյացության, հակահրեականության և անհանդուրժողականության դեմ մղած հանրությանը հայտնի գործունեության համար:

ՌԱԵՀ-ի աշխատանքային ծրագրի հիմնաքարերից մեկը երկիր առ երկիր մոտեցումն է, որի միջոցով նա վերլուծում է ռասիզմին և անհանդուրժողականությանը վերաբերող իրավիճակը Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներից յուրաքանչյուրում և խորհուրդներ ու առաջարկներ է ներկայացնում բացահայտված խնդիրները կարգավորման առնչությամբ:

ՌԱԵՀ-ի երկիր առ երկիր մոտեցումը վերաբերում է Եվրոպայի Խորհրդի անդամ բոլոր երկրներին՝ հավասարության հիմունքով: Աշխատանք է տարվում է 5 տարվա պարբերաշրջանով՝ տարեկան ընդգրկելով 9 -10 երկիր: Առաջին փուլի զեկույցները ավարտվել են 1998 թ. վերջին, երկրորդ փուլինը՝ 2002 թ. վերջին, իսկ երրորդ փուլինը՝ 2007 թ. վերջին: Չորրորդ փուլի զեկույցների ներկայացման աշխատանքը սկսվել է 2008 թ. հունվարին:

Զեկույցների պատրաստման աշխատանքային մեթոդները ներառում են փաստացի վերլուծություն, կոնտակտային այցելություն համապատասխան երկիր և ապա՝ կոնֆիդենցիալ երկխոսություն ազգային իշխանությունների հետ:

ՌԱԵՀ-ի զեկույցները հարցումների կամ վկայության ցուցմունքների արդյունք չեն: Դրանք բազմազան աղբյուրներից քաղված՝ մեծաքանակ տեղեկատվության վրա հիմնված վերլուծություններ են: Փաստացի ուսումնասիրությունները հիմնված են նշանակալից թվով ազգային և միջազգային գրավոր աղբյուրների վրա: Ի տեղվույն այցելությունը անմիջական հանդիպման հնարավորություն է տալիս համապատասխան շրջանակների հետ (կառավարական և ոչ կառավարական)՝ մանրամասն տեղեկատվություն հավաքելու առումով: Կոնֆիդենցիալ երկխոսության գործընթացը ազգային իշխանությունների հետ վերջիններիս թույլ է տալիս (եթե նրանք անհրաժեշտ են գտնում) նախնական զեկույցի մեջ ճշգրտումներ առաջարկել՝ ուղղելու համար զեկույցում տեղ գտած հնարավոր փաստական սխալները: Երկխոսության վերջում ազգային իշխանությունները ցանկության դեպքում կարող են պահանջել, որ նրանց տեսակետները կցվեն ՌԱԵՀ-ի վերջնական զեկույցին:

Երկիր առ երկիր չորրորդ փուլի զեկույցները կենտրոնացած են իրագործման և գնահատման վրա: Դրանցում քննարկվում են, թե ինչ չափով են ուշադրության առնվել ՌԱԵՀ-ի նախորդ զեկույցներում արված գլխավոր հանձնարարականները. տրվում է տարվող քաղաքականության և ձեռնարկած միջոցների գնահատականը: Այս զեկույցները վերլուծություն են պարունակում նաև երկրում տվյալ հարցի շուրջ առկա նոր զարգացումների վերաբերյալ:

Առաջնահերթային իրագործում է պահանջվում մի շարք առանձնահատուկ հանձնարարականների համար, որոնք ընտրվել են չորրորդ փուլի նոր զեկույցում արված հանձնարարականների թվից: Սույն զեկույցի հրատարակումից ոչ ուշ, քան երկու տարի անց ՌԱԵՀ-ը կիրականացնի այդ առանձնահատուկ հանձնարարականներին վերաբերող միջանկյալ ուսումնասիրությունների գործընթաց:

Սույն զեկույցը ՌԱԵՀ-ի կողմից կազմվել է իր սեփական և լիակատար պատասխանատվությամբ: Այն արտացոլում է 2010 թ. հունիսի 24-ի իրադրությունը. այս ժամկետին հաջորդող որևէ զարգացում չի ներառվում ստորև բերվող վերլուծության մեջ, ուստի և հաշվի չի առնվում ՌԱԵՀ-ի արած եզրակացություններում ու առաջարկներում:

Ամփոփագիր

Հայաստանի մասին 2007 թ. փետրվարի 13-ի ՌԱԵՀ-ի երկրորդ զեկույցից հետո առաջընթաց է գրանցվել նշյալ զեկույցում լուսաբանված մի շարք բնագավառներում:

Իշխանությունների կողմից զգալի ջանքեր են գործադրվել էթնիկական փոքրամասնությունների կրթության և մշակույթի բնագավառում: Ռադիոհեռարձակման մասնավոր կայաններում ժամանակային սահմանափակումներ չկան էթնիկական փոքրամասնությունների համար նախատեսված ծրագրերում: Այն համայնքներում, որտեղ էթնիկական փոքրամասնություններ են ապրում, իշխանություններն օգնում են մանկապարտեզներ բացել: Պետությունը օգնություն է տրամադրել հրեական համայնքին՝ իր ազգային ավանդույթների պահպանման համար:

Մարդու իրավունքների պաշտպանը ուշադրությամբ ուսումնասիրում է տարբեր խոցելի խմբերի կողմից ստացված բողոքները:

Նոր օրենք է ընդունվել փախստականների և ապաստանի մասին, և դրա իրագործման բոլոր պայմանները նախանշված են: Ժամանակավոր պաշտպանության արժանի բոլոր անձինք ստացել են փախստականի կարգավիճակ: Երևանի ընդունման կենտրոնի հնարավորություններն ավելացել են: Միջազգային կազմակերպությունները Հայաստանին օգնություն են տրամադրել՝ իրականացնելու սահմանապահների վերապատրաստման գործընթացը:

Ինչպես և նախկինում՝ գոյություն չունի թշնամանք էթնիկական փոքրամասնությունների և ոչ քաղաքացիների (ներառյալ՝ ազգությամբ ոչ հայերի) նկատմամբ.չկա ոչ մի վկայություն հակահսլամական տրամադրությունների մասին: Իշխանությունները շարունակում են եզդիների և քրդերի խնդիրներին վերաբերվել նրանց ինքնաճանաչողության բարձրացման սկզբունքի հիման վրա:

ՌԱԵՀ-ը ողջունում է այս դրական զարգացումները Հայաստանում: Այնուամենայնիվ, չնայած ձեռք բերված հաջողություններին՝ որոշ հարցեր շարունակում են մտահոգության տեղիք տալ:

Բացակայում են ռասայական խտրականությունն արգելող քաղաքացիական և վարչական իրավունքի համապարփակ դրույթներ. Քրեական օրենսգրքում չկան դրույթներ, որոնք արգելակեն ռասիզմը քաջալերող կազմակերպությունների գործունեությունը: Փոփոխություններ չեն կատարվել նաև Այլընտրանքային ծառայության մասին օրենքում: Տեղական և միջազգային կառույցների կողմից լայն քննադատության առարկա դարձած՝ մի շարք սահմանափակումներ պարունակող Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին Օրինագիծը միայն առաջին ընթերցմամբ է Խորհրդարանում անցել:

Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությանը հատկացվող բյուջեն շարունակում է մնալ անբավարար: Ոստիկանության դեմ հարուցած բողոքների քննության անկախ մեխանիզմ չի ստեղծվել: Գոյություն չունի վիճակագրություն՝ կրոնական ատելության հողի վրա կատարված հանցագործությունների և ռասայական խտրականության պատճառով կատարված քաղաքացիական կամ վարչաիրավական հայցերի վերաբերյալ: Ընդհանրապես գոյություն չունի էթնիկական տվյալների հավաքման համակարգ: Անհրաժեշտ է, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը ստեղծի նման գործունեության մասնագիտական գիտելիքների հիմքերը:

Գոյություն ունեն ակնհայտ վտանգներ կրոնական ազատությունների բնագավառում անհանդուրժողականության դրսևորման առումով: Դպրոցում կրոնական փոքրամասնություններին պատկանող աշակերտները ենթարկվում են խտրականության. պաստառների փակցման միջոցով իրականացվում են շարունակական գործողություններ «աղանդների» դեմ: Քաղաքական արձագանքը՝ նախագահական թեկնածուներից մեկին սիոնիստական դավադրություն կազմակերպելու մեղադրանք ներկայացնելու, շատ թույլ էր: Ազգային անվտանգության ծառայությունը մոնիտորինգի է ենթարկում սովորական կրոնական գործունեությունը:

Ավելի արդարացի համակարգ է պահանջվում՝ էթնիկական փոքրամասնությունների կազմակերպություններին դրամաշնորհներ տրամադրելու համար: Էթնիկական փոքրամասնություններով բնակեցված տարածքներում մանկապարտեզներին տրամադրվող ֆինանսավորումը բավարար չէ: Չեն ձեռնարկվում նաև բավարար միջոցներ՝ աջակցելու համար միջնակարգ դպրոցի ազգային փոքրամասնությունների պատկանող շրջանավարտներին՝ ստանալու բարձրագույն կրթություն: Անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել ռուսերեն և այլ փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող դասագրքերի և ուսումնական պլանների կազմակերպման գործում: Որոշ եզդի ընտանիքներ շարունակում են ապրել Զովունի գյուղում ապօրինի կառուցված տներում՝ բարձր լարվածության լարերի տակ:

Հայաստանում Փախստականների գծով Միավորված ազգերի գերագույն լիազորը (ՓՄԱԳԼ) իր վրա է կրում փախստականների և ապաստան փնտրողների հոգածության հիմնական ծանրությունը: Ոչ բոլոր փախստական ընտանիքները, որոնք այժմ ապրում են Նոր Նորքի կենտրոնի չվերանորոգված շինություններում, բնակարաններ կստանան: Փախստականներն ու ապաստան փնտրողները տեղեկատվության պակաս ունեն արտոնությունների բազային փաթեթի ծրագրի և բուժօգնության համակարգի՝ իրենց իրավունքների վերաբերյալ: Եվ վերջապես, ՌԱԵՀ-ն այն կարծիքն ունի, որ շատ ավելի մեծ ուշադրություն էր պետք դարձնել իր երկրորդ զեկույցում տրված հանձնարարականների վրա:

Այս զեկույցում ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին առաջարկում է հետագա քայլեր ձեռնարկել մի շարք բնագավառներում. այդ համատեքստում տրվում են մի քանի լուրջ հանձնարարականներ, որոնք ներառում են հետևյալը:

Քրեական իրավախախտումների առումով նոր դրույթներ է պետք մտցնել, որոնք կվերաբերեն ռասիզմին աջակցող կազմակերպություններին: Քրեական իրավունքի դրույթները պետք է արդյունավետ կերպով կիրառվեն՝ընդդեմ ռասիստական պատճառներով կատարվող բռնությունների և սադրանքների: Քաղաքացիական և վարչական իրավունքի համապարփակ դրույթներ պետք է նախատեսել՝ ընդդեմ ռասայական խտրականության:

Դատական համակարգը, իրավապահ մարմինների աշխատակիցները և փաստաբանները պետք է հատուկ վերապատրաստում անցնեն՝ ռասիզմի, ռասայական խտրականության և անհանդուրժողականության դեմ ազգային և միջազգային օրենքները ճանաչելու առումով:

Այլընտրանքային ծառայության տևողությունը պետք է անհապաղ կրճատվի վեց ամսով: Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքում արվող փոփոխություններին վերաբերող օրինագիծը պետք է վերջնականապես հետ կանչվի: Ազգային անվտանգության ծառայությունը պետք է զերծ մնա սովորական կրոնական գործունեությունը մոնիտորինգի ենթարկելուց:

Պետք է լինի ոստիկանության դեմ ուղղված բողոքները քննող մի որևէ անկախ մեխանիզմ: Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությանը պետք է հատկացվեն բավարար միջոցներ:

Հայաստանի իշխանությունները պետք է սիստեմատիկաբար էթնիկական տվյալներ և վիճակագրություն հավաքեն կրոնական դրդապատճառներով կատարվող իրավախախտումների և քաղաքացիական ու վարչական իրավունքի դրույթներում ներառված ռասայական խտրականության հայցերի վերաբերյալ:

Պետք է լրատվամիջոցների համար շտապ ընդունել ինքնակարգավորման էթիկայի նոր կանոնագիրք՝ ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության՝ ձևակերպված հստակ դրույթներով: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի համար պետք է կազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ, թե ինչպես հավասարակշռել արտահայտվելու ազատությունը՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հետ:

Կոորդինացիոն խորհրդի տրամադրության տակ դրված դրամաշնորհը պետք է բաժանվի յուրաքանչյուր էթնիկական փոքրամասնության իրական կարիքներին համապատասխան*: Նախապատվությունը պետք է տալ էթնիկական փոքրամասնությունների բնակության տարածքներում մանկապարտեզներ հիմնելուն, որպեսզի երեխաներն ունենան անհրաժեշտ լեզվական հմտություններ՝ տարրական դպրոց հաճախելու համար: Պետք է ընդունել օրենք՝ հեշտացնելու բարձրագույն կրթության մատչելիությունը միջնակարգ դպրոցն ավարտած էթնիկական փոքրամասնությանը պատկանող աշակերտների համար: Հետևողական քայլեր է պետք ձեռնարկել՝ թողարկելու դասագրքերի ողջ տեսականին, նաև համապատասխան ուսումնական պլաններ՝ դպրոցներում ռուսաց կամ այլ փոքրամասնությունների լեզուները ուսուցանելու նպատակով: Իշխանությունները պետք է աշխատեն համարժեք շինություններ տեղափոխել Զովունի գյուղում բնակվող եզդի ընտանիքներին, որոնք չեն կարողանում ստանալ բնակարանների սեփականաշնորհման վկայականներ՝ իրենց տները բարձր լարման հոսանքալարերին շատ մոտ գտնվելու պատճառով:

Երևանի ընդունման կենտրոնի նոր մասնաճյուղը որքան հնարավոր է պետք է շուտ շահագործման հանձնվի, իսկ հինը պետք է վերանորոգվի: Նոր Նորքի կենտրոնում ոչ մի փախստական ընտանիք չպետք է ապրի չվերանորոգված շինության մեջ: Պետք է լինի մի համակարգ՝ օգնելու փախստականներին ու ապաստան փնտրողներին՝ «Աղքատության գնահատման համակարգի ցուցակում» ընդգրկվելու և դրա հնարավորություններից օգտվելու համար, նաև տեղեկացնելու նրանց՝ առողջության բնագավառում իրենց իրավունքների մասին:

Բոլոր դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները պետք է հիշեցվեն կրոնական բազմակարծությունը հարգելու իրենց պարտականության մասին: Նրանք պետք է եզդի ծնողներին հնարավորություն ընձեռեն՝ կատարելու ազատ և տեղեկացված ընտրություն՝ կապված իրենց երեխաների կրթության հետ: Պետք է որդեգրել այնպիսի մոտեցում, որը կնախատեսի պատմության և հարակից առարկաների ուսուցման ժամանակ ինքնաճանաչողության ապահովումը:

---

* Այս կետում արված առաջարկությունները կդառնան ՌԱԵՀ-ի միջանկյալ ուսումնասիրության առարկա՝ զեկույցի հրատարակումից ոչ ուշ, քան երկու տարի անց:

Եզհակաձրղթյրղննեհ և հանձնահահականնեհ

I. Իրավական դրույթների առկայությունն ու կիրառումը

Միջազգային իրավական փաստաթղթեր

1. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ը կրկնել է իր հանձնարարականն այն մասին, որ Հայաստանը պետք է. ա) հայտարարություն անի ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի 14-րդ հոդվածի վերաբերյալ (ՌԽՎՄԿ), (բ) վավերացնի Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան, Տեղական մակարդակով հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին եվրոպական կոնվենցիան և Ներգաղթած բոլոր աշխատողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան և (գ) վավերացնի Ներգաղթած աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիան:

2. Ինչ վերաբերում է Ներգաղթած աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիային, ապա ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ մոնիտորինգի չորրորդ փուլի ժամանակ իրենք որոշել էին կենտրոնանալ ավելի պակաս թվով փաստաթղթերի վավերացման վրա, քան երրորդ փուլում էր:

3. Ինչ վերաբերում է ՌԽՎՄԿ-ի 14-րդ հոդվածին, ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թ.12 Արձանագրությունը: Այդպիսով, այն արդեն իսկ հնարավորություն է տվել իր իրավասության տակ գտվող բոլոր անձանց՝ հայցադիմումներ ներկայացնել միջազգային դատական ատյաններ կատարված խտրականության վերաբերյալ: ՌԱԵՀ-ի կարծիքով ՌԽՎՄԿ-ի 14-րդ հոդվածի վերաբերյալ արվելիք հայտարարությունը կդիտարկվի որպես լրացուցիչ քայլ, որի համար չպետք է լինի իրավական կամ գործնական որևէ լուրջ խոչընդոտ:

4. ՌԱԵՀ-ը տեղեկացվել է, որ Հայաստանի իշխանությունները համարում են, որ տեղական օրենսդրությունն արդեն իսկ համատեղելի է Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի և տեղական մակարդակով հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների հետ. այդ իսկ պատճառով նրանք լրջորեն քննարկում են այդ երկու փատաթղթերի վավերացման հարցը:

5. ՌԱԵՀ-ը տեղեկացրել է նաև, որ Հայաստանի իշխանությունները ներկայումս մտադիր չեն վավերացնելու Ներգաղթած բոլոր աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան: Այդ առնչությամբ նրանք նշում են, որ Հայաստանի քաղաքացիները այդ Կոնվենցիայի պաշտպանության ներքո ոչ մի արտոնություն ձեռք չեն բերում Եվրոպական Միության երկրներում. ավելին, Հայաստանն այսօր բանակցություններ է վարում Անկախ Պետությունների Համագործակցության մյուս անդամ երկրների հետ՝ սույն Կոնվենցիային համանման համաձայնագրեր ստորագրելու համար: ՌԱԵՀ-ը հիշեցնում է , որ Ներգաղթած բոլոր աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան մարդու իրավունքներին վերաբերող փաստաթուղթ է, որի նկատմամբ փոխադարձության սկզբունքով մոտեցում չպետք է դրսևորվի:

6. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է Հայաստանին՝ հայտարարություն անել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 14-րդ հոդվածի վերաբերյալ և վավերացնել Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան, Տեղական մակարդակով հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին եվրոպական կոնվենցիան և ներգաղթած բոլոր աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան:

Այլընտրանքային ծառայության մասին օրենքը

7. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին առաջարկել է վերանայել Այլընտրանքային ծառայության մասին օրենքի էությունը և իրագործումը՝ հավաստիացնելու համար, որ նա կատարում է Եվրոպայի Խորհրդի առաջ վերցրած իր պարտավորությունները՝ իրական հնարավորություն տալով խղճի դրդապատճառներով հրաժարվածներին կատարելու այլընտրանքային քաղաքացիական ծառայություն: Այն առաջարկում է նաև, որ այլընտրանքային քաղաքացիական ծառայության կատարումից հրաժարվածները չհետապնդվեն և չբանտարկվեն, այլ նրանց հնարավորություն տրվի կատարելու իրենց հասարակական պարտքը այնպիսի պայմաններում, որոնք համընկնում են զինվորական ծառայությունից հրաժարվելու նրանց դրդապատճառներին[1]:

8. ՌԱԵՀ-ը նշում է, որ իր երկրորդ զեկույցի հրատարակումից հետո տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք առնչվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների հետ: 2009 թ. հոկտեմբերի 27-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Պալատը ընդունել է դատավճիռ՝ Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործի կապակցությամբ. դատավճռում նշված է, որ կիրառելով այլընտրանքային զինվորական ծառայություն՝ տվյալ երկիրն արդեն իսկ իրականացնում է այն լրջագույն պահանջը, որ միջազգային իրավական փաստաթղթի համաձայն պարտավորված է կատարել:

9. 2009 թ. հոկտեմբերի 27-ի դատավճիռը վերջնական չէ, քանի որ Դատարանի Մեծ պալատը համաձայնել է վերանայել գործը[2]: Ամեն դեպքում Հայաստանի իշխանություններն արդեն իսկ հայտարարել են այլընտրանքային ծառայության ժամկետը վեց ամսով կրճատելու իրենց մտադրության մասին (30 ամիս այլընտրանքային զինվորական ծառայության և 36 ամիս այլընտրանքային քաղաքացիական ծառայության համար)[3]: ՌԱԵՀ-ի կարծիքով դա Հայաստանի օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացում ողջունելի արաջխաղացում է[4]:

---

[1] Այն անձանց իրավիճակը, ովքեր ներկա օրենսդրության պայմաններում հետապնդվել են և դատապարտվել այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու համար՝ քննության է առնված Խոցելի /Թիրախային խմբեր, Կրոնական փոքրամասնություններ հատվածում:

[2] Տե՛ս 2010 թ. մայիսի 10-ի՝ հինգ դատավորների հանձնախմբի որոշումը՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածի համապատասխան:

[3] Զինվորական ծառայության ժամկետը 24 ամիս է:

[4] Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի թ. R(87)8 հանձնարարականի համաձայն՝ «որևէ տեսակի այլընտրանքային ծառայություն պետք է սկզբունքորեն լինի քաղաքացիական և բխի հասարակության շահերից: Այն չպետք է լինի պատժիչ բնույթի: Դրա տևողությունը, ի համեմատ զինվորական ծառայության, պետք է մնա ողջամիտ ժամկետների սահմաններում»: Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թ. 1361(2004թ.)

10. ՌԱԵՀ-ն այնուհետև նշում է, որ գործող նորմերի համաձայն՝ նրանք, ովքեր այլընտրանքային քաղաքացիական ծառայություն են անցնում Հայաստանում, չպետք է կատարեն որևիցե մի գործողություն, որը կապ ունի երկրի պաշտպանունակության ամրապնդման ջանքերի հետ:[5] Ամեն դեպքում, սակայն, նրանք պետք է մնան Պաշտպանության նախարարության պատասխանատվության ներքո, որը մտադիր չէ հրաժարվել իր վերահսկողական դերից: Այս կապակցությամբ միակ նշանակալից բարելավում կարող է լինել այն, որ հենց Պաշտպանության նախարարության ներսում ուժեղանա քաղաքացիական վերահսկողությունը:

11. ՌԱԵՀ-ը տեղյակ է, որ Եհովայի վկաները, որոնք ներկայացնում են խղճի շարժառիթներով հրաժարվողների գերակշիռ մեծամասնությունը Հայաստանում, չեն ընդունում Պաշտպանության նախարարության ներգրավվածությունը այն փուլին, որը հաջորդում է այլընտրանքային ծառայություն կատարելու իրավունքի ճանաչումից մինչև զորացրու[6] :ՌԱԵՀ-ը համարում է, որ հիմնական չափորոշիչը պետք է լինի գործնականում իրապես զուտ քաղաքացիական բնույթի այլընտրանքային ծառայություն կատարելու առկայությունը: ՌԱԵՀ-ը հույսով է, որ այս սկզբունքն իր արտացոլումը կգտնի խնդրի շուրջ փոխադարձաբար ընդունելի որոշում կայացնելու ժամանակ: Դրանից բացի ՌԱԵՀ-ը խրախուսում է իշխանություններին ծառայության ժամկետը կրճատելու նրանց պլանների հարցում:

12. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի այլընտրանքային ծառայության ժամկետը, թե քաղաքացիական և թե զինվորական, անհապաղ կրճատվի վեց ամսով:

Քրեական իրավունք

13. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել է Հայաստանի իշխանություններին միջոցներ ձեռնարկել բարձրացնելու հանրության իրազեկությունը ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների նոր դրույթների վերաբերյալ:

14. ՌԱԵՀ-ը չի տեղեկացվել նման որևէ ձեռնարկման մասին: Իշխանություններն անընդհատ հայտարարում են, որ չեն արձանագրվել ռասայական դրդապատճառներով կատարված հանցագործություններ: ՌԱԵՀ-ը տեղյակ է, որ եղել են բողոքներ և առնվազն մեկ դատական հետապնդում՝ կապված կրոնական ատելությունից հրահրված հանցագործության հետ: Այն նշում է, որ իշխանություններն ի վիճակի չեն եղել այդ խնդրին նվիրված որևէ քրեական վիճակագրություն տրամադրել: ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ ռասիզմի և

բանաձևը «համարում է, որ այլընտրանքային քաղաքացիական ծառայության համար սահմանված քառասուներկու ամիս ժամկետն անընդունելի է և չափազանց մեծ և առաջարկում է փոխել օրենքի այս կետը՝ ծառայության ժամկետը կրճատելով մինչև երեսունվեց ամիս... »: Նույն կառույցի թ. 1532(2007թ.) բանաձևում հիասթափությամբ նշվում է, որ «գործող օրենքը... մինչ օրս խղճի դրդապատճառներով հրաժարվածներին ոչ մի երաշխիք չի տալիս «կատարելու զուտ քաղաքացիական բնույթի իրական այլընտրանքային ծառայություն, որն իր էությամբ չլինի ոչ վախ ներշնչող, ոչ պատժիչ», ինչպես և նախատեսված են Եվրոպայի Խորհրդի չափորոշիչներով»:

[5] Պարզ չէ, թե կան՞ արդյոք այդ նորմերից օգտվող անձինք այսօր: Եհովայի վկաները դրանցից չեն օգտվում:

[6] Պաշտպանության նախարարության ներգրավվածությունը ճանաչման գործընթացին և այն փաստը, որ խղճի դրդապատճառներով հրաժարվածները կրում են պահեստայինների քարտեր (զորացրված բոլոր անձանց նման), չի թվում, թե խնդիր է ստեղծում Եհովայի վկաների համար:

ռասայական խտրականության դեմ ազգային օրենսդրության պայքարին վերաբերող իր Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականի համաձայն՝ ռասայական ատելության պատճառ կարող է դառնալ նաև կրոնը՝ ի հավելումն «ռասայի» գույնի, լեզվի և ազգային կամ էթնիկական ծագման:

15. ՌԱԵՀ-ն առաջարկում է իշխանություններին ստեղծել մի համակարգ, որը նրանց հնարավորություն կտա մոնիտորինգի ենթարկել ռասայական ատելության պատճառով կատարված բոլոր հանցագործությունների հետ կապված իրավիճակը, ինչպես որ այդ երևույթը ներկայացված է իր Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականում:

16. Առաջարկվել է ընդունել, որ կրոնական ատելության պատճառով կատարված հանցագործությունների հանդեպ իշխանությունների արձագանքը եղել է ոչ համարժեք: Դա չի վերաբերում հակասեմիտիզմի դրսևորմամբ կատարված բռնության եզակի միջադեպին, որի մասին զեկուցվել է ՌԱԵՀ-ին (ներառյալ հրեական հուշարձանների վնասումը 2007-ին): Դա հիմնականում վերաբերում է հաստատված այն մի քանի դեպքերին, երբ ֆիզիկական հարձակման են ենթարկվել իրենց հավատքը քարոզել փորձող Եհովայի վկաները և այն բազմաքանակ միջոցառումներին, երբ պաստառների և թռուցիկների օգտագործմամբ պայքար է մղվում «աղանդների» գործունեության դեմ:

17. ՌԱԵՀ-ը նշում է, որ ֆիզիկական բռնության ենթարկվելու հետ կապված բողոքների մեծ մասը ոստիկանությունը հետաքննել է առանց դիմելու տուժածների օգնությանը: Ավելին՝ Եհովայի վկաներն իրենց զոհունակությունն են հայտնել այն աշխատառճի նկատմամբ, թե ինչպես իշխանությունները կարողացել են կարգավորել մեկ այլ նմանատիպ միջադեպ, որի արդյունքում 2008-ին մեղադրական դատավճիռ էր արձակվել:

18. Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ի մտահոգությունները մեկտեղվում են ըստ այն ընթացակարգի, որի միջոցով նրանք արձագանքել են մի շարք ՈԿԿ-ների կողմից ներկայացված բողոքներին, որոնք տեղ էին գտել այն բանից հետո, երբ հեղինակավոր մի թերթ իր առաջին էջի վրա զետեղել էր լայնորեն տարածված մի թռուցիկի լուսանկարը: Այս վերջինիս մեջ շեշտվում էր «աղանդների քրեական ծագումը» և թերթն էլ իր մեկնաբանությունն էր ավելացրել՝ «Ինչ-որ մեկը պետք է լսի այն ամենը, ինչ ասվում է»: Դատախազն այդ գործը փոխանցել էր Ազգային անվտանգության ծառայություն, որտեղ որոշել էին, որ ոչ մի քայլ ձեռնարկելու կարիք չկա: Իշխանությունների համաձայն՝ դատախազի արարքը միանգամայն օրինական էր, քանի որ հենց Ազգային անվտանգության ծառայությունը կարող է գործել որպես հետաքննություն անցկացնող կառույց ազգային անվտանգության, միջէթնիկական բախումների և ահաբեկչության հարցերով: ՌԱԵՀ-ը, առանց այդ գործի հանգուցալուծումը հարցականի տակ դնելու առանձնակի մի ցանկության, հարց է տալիս, թե արդյոք այդ գործակալության օգնությանը դիմելն այնպիսի հարցերում, ինչպիսիք են ատելություն տարածող ելույթները, համապատասխանում են անվտանգության հետ առնչվող խնդիրներին՝ կապված կրոնական նոր շարժումների գործունեության հետ: Դա, ՌԱԵՀ-ի կարծիքով, կմեծացնի կանխակալ կարծիք կազմելու ռիսկերը[7]:

[7] Տե՛ս Կարծիքների մթնոլորտը, Լրատվամիջոցները և Քաղաքական քննարկումները:

19. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի ատելության հանցագործությունների դրույթների կարգը դասվող հայցադիմումները հետաքննվեն ոստիկանության կողմից՝ որպես հակակշիռ Ազգային անվտանգության ծառայությանը:

20. ՌԱԵՀ-ը նշում է, որ համաձայն Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի՝ «ազգային, ռասայական և կրոնական ատելության հրահրմանը, ռասայական գերապատվությունը կամ ազգային արժանապատվության նվաստացմանն ուղղված գործողությունները» նախատեսում են ավելի խիստ պատիժ, եթե կատարվել են կազմակերպված խմբի կողմից:[8] ՌԱԵՀ-ը տեղյակ չէ և ոչ մի դատական որոշման, որն իրագործվել է այս դրույթը նշյալ կանխամտածված գործողություններից որևէ մեկի դեպքում. ռասիզմին աջակցող խմբի ստեղծում կամ ղեկավարում, նման խմբի սատարում կամ մասնակցություն նրա գործողություններին, այսինքն՝ այնպիսի հանցագործություններում իր ներդրումն ունենալու մտադրությամբ, որոնք ներառված են Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականի 18-րդ կետի ա,բ,գ,դ,ե, և զ ենթակետերում: ՌԱԵՀ-ի համարում է, որ Հայաստանի քրեական իրավունքի դրույթները կլինեն ավելի թափանցիկ, եթե դրանք հստակորեն պատիժ նախատեսեն վերը թվարկված արարքների համար:

21. ՌԱԵՀ-ն առաջարկում է նշյալ արարքները հստակորեն դասել քրեական հանցագործությունների շարքը, եթե կատարվել են դիտավորությամբ. (ա) ռասիզմին աջակցող խմբի ստեղծումն ու ղեկավարումը, (բ) նման խմբի սատարումը, (գ) մասնակցությունը նրա գործողություններին՝ այն շարքին պատկանող հանցագործություններին մասնակցություն բերելու մտադրությամբ, որոնք թվարկված են Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականում:

Քաղաքացիական և վարչական իրավունք

22. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ը կրկնել է իր առաջարկը, որ ռասայական խտրականության դեմ ընդունվի քաղաքացիական և վարչական դրույթների սպառիչ օրենսդրություն[9]:

23. ՌԱԵՀ-ը նշում է, որ դրա հետ կապված ոչ մի էական բարեփոխում չի կատարվել: Որպես միակ առաջընթաց քայլ կարելի է համարել այն առաջարկը, որ Վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություն մտցվի աշխատանքի բնագավառում խտրականությունն արգելելու մասին դրույթում: Հայաստանի իշխանությունները համարում են , որ ներկա հատվածաբար մոտեցումը՝ ընդհանուր սահմանադրական դրույթների[10] հետ միասին, ապահովում է բավարար պաշտպանություն:

---

[8] Կան նաև դրույթներ 2001 թ. ընդունված ՈԿԿ-ների մասին օրենքում, որոնց համաձայն՝ լուծարման են ենթակա այն կազմակերպությունները, որոնց նպատակն է հրահրել ռասայական թշնամանք: Ավելին՝ օրենքը թույլ չի տալիս որպես քաղաքական կուսակցություններ ճանաչել նրանց, ովքեր սահմանափակում են անդամակցության իրավունքը՝ ազգային, ռասայական կամ կրոնական պատճառներով:

[9] Ընդհանուր քաղաքականության թ.7 հանձնարարականի համաձայն՝ ռասայական խտրականությունը՝ դա տարբերակցված վերաբերմունքն է, որը հիմնված է այնպիսի հենքի վրա, ինչպիսին են «ռասան», գույնը, լեզուն, կրոնը, քաղաքացիությունը, ազգային կամ էթնիկական ծագումը, որը չունի ոչ օբյեկտիվ, ոչ էլ ընդունելի դրդապատճառներ:

[10] Եվ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թ. 12 Արձանագրությունը, որն ուղղակիորեն կիրառելի է նաև տեղական օրենսդրության մեջ:

24. ՌԱԵՀ-ի փորձը հուշում է, որ հատվածական մոտեցումը հազվադեպ է տալիս ամբողջապես գոհացուցիչ արդյունք: Համաձայն իշխանությունների տրամադրած տեղեկատվության՝ Հայաստանը խտրականությունն արգելող դրույթներ ունի իր քրեա-դատավարության, սոցիալական աջակցության, կրթության և աշխատանքի օրենսդրություններում:Ամեն դեպքում, սակայն, սրանք այն միակ բնագավառները չեն, որտեղ կարող են ծագել ռասայական խտրականության հետ կապված բողոքներ: Ինչ վերաբերում է սահմանադրական դրույթներին, ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ եթե դրանք նույնիսկ գերարդյունավետ լինեն, միևնույնն, է անհրաժեշտ է լրացնել այն որոշակի՝ ճշգրտող օրենսդրությամբ:

25. ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանություններն ընդունեն ռասայական խտրականության դեմ քաղաքացիական և վարչական դրույթների սպառիչ օրենսդրություն՝ ոգեշնչված Ընդհանուր քաղաքականության թ.7 հանձնարարականով:

26. ՌԱԵՀ-ը նշում է, որ իշխանությունները չունեն ռասայական խտրականությանը վերաբերող դատական գործերի վիճակագրություն, ինչպես որ դա հասկացվում է Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականից: Իրենք, սակայն, տեղյակ են մի քանի իրավական գործողությունների մասին, որոնք վերաբերվել են (դրանց մի մասը հաջող ավարտով), ի շարս այլոց, կրոնական հողի վրա դրսևորված խտրականությանը:

27. ՌԱԵՀ-ն Հայաստանի իշխանություններին առաջարկում է հավաքել վստահելի տվյալներ քաղաքացիական և վարչաիրավական գործողությունների մասին, որոնք վերաբերում են ռասայական խտրականությանը, ինչպես որ այդ հասկացությունը պարզաբանվում է Ընդհանուր քաղաքականության թ.7 հանձնարարականում:

Խտրականության դեմ պայքարող մարմին

28. Ներկա պահին Հայաստանում գործադիր իշխանությունից անկախ միակ մարմինը, որը կարող է ունենալ մասնագիտացված դերակատարում՝ Մարդու իրավունքների պաշտպանն է:

29. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն իշխանություններին առաջարկում է երաշխավորել, որ Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությունը ապահովված կլինի բավարար մարդկային և ֆինանսական միջոցներով՝ իր հնարավորությունների ողջ ուժով գործելու համար: Այն նաև առաջարկում է, որ այդ տեսչության աշխատանքներում և պարտականություններում որևէ փոփոխություն կատարելու ժամանակ հաշվի առնվեն ռասիզմի[11] և ռասայական խտրականությանը վերաբերող հարցերը: Եվ վերջապես, այն առաջարկում է, որպեսզի Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությունն իրականացնի իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ իր կատարած աշխատանքների մասին ողջ հանրությանը և մասնավորապես ազգային փոքրամասնություններին ավելի լավ տեղեկացնելու համար:

30. ՌԱԵՀ-ի աղբյուրները միակարծիք են, որ Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությունը հեղինակություն է վայելում և ստանում է ավելի ու ավելի մեծ

[11] Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականի համաձայն՝ ռասիզմն այն հավատն է, որ այնպիսի հիմքեր, ինչպիսին են «ռասան», գույնը, լեզուն, կրոնը, ազգային կամ էթնիկական ծագումը, ըստ որի արդարացնում են որևէ անձի կամ մի խումբ անձանց քամահրանքը որևէ անձի կամ մի խումբ անձանց գերակայության համոզմունքը:

թիվ կազմող բողոքներ տարբեր խոցելի խմբերից՝ մասնավորապես փախստականներից: Թվում է, թե տեսչության ներքին կառուցվածքը չի խանգարում նրան իրականացնել մասնագիտացված մարմնի ամենակարևոր պարտականություններից մեկը, այն է՝ Ընդհանուր քաղաքականության թ. 2[12] և 7 հանձնարարականների համաձայն՝ զբաղվել անհատական գործերով: Նրա ամենախոցելի տեղը բյուջեն է, որը, չնայած վերջերս կատարված ավելացումներին[13], շարունակում է մնալ անբավարար: ՌԱԵՀ-ի կարծիքով՝ առաջինը այս հարցի վրա է պետք ուշադրություն դարձնել:

31. Դրանից բացի, հաշվի առնելով նոր կրոնական շարժումների դեմ ներկայումս ձևավորված բացասական մթնոլորտը[14], ՌԱԵՀ-ը համարում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությունը պետք է կրոնական հանդուրժողականությունը բարձրացնելուն միտված իրազեկման միջոցառումներ կազմակերպի:

32. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությունն ապահովել բավարար միջոցներով, որպեսզի այն ի վիճակի լինի արդյունավետորեն սատարել ռասիզմից և ռասայական խտրականությունից տուժածներին:

33. Այն առաջարկում է նաև, որպեսզի Մարդու իրավունքների պաշտպանի տեսչությունը կազմակերպի կրոնական հանդուրժողականության բարձրացման իրազեկությանը միտված միջոցառումներ:

Դատական համակարգի, իրավապահ մարմինների աշխատակիցների և փաստաբանների վերապատրաստումը

34. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել է, որպեսզի դատավորները, իրավապահ մարմինների աշխատակիցները և փաստաբանները հատուկ վերապատրաստում անցնեն ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի հետ կապված հարցերում:

35. ՌԱԵՀ-ը նշում է, որ դատավորները, իրավապահ մարմինների աշխատակիցները և փաստաբանները վերապատրաստում են անցնում Մարդու իրավունքների ընդհանուր հարցերում[15]: ՌԱԵՀ-ը տեղեկացվել է նաև, որ ծրագրեր կան բարեփոխել դատավորների, դատախազների և փաստաբանների վերապատրաստումն իրականացնող մարմինը: 2011-ի հունվարի 1-ից Դատական դպրոցը կփոխարինվի Արդարադատության ակադեմիայով: Անհրաժեշտ իրավական դրույթները կընդունվեն 2010-ին:

36. ՌԱԵՀ-ը համարում է, որ ի լրացումն մարդու իրավունքների ընդհանուր հարցերի կուրսերի, անհրաժեշտ է հատուկ վերապատրաստման նախնական և առանց աշխատանքից կտրվելու դասընթացներ անցնել ռասիզմի, ռասայական խտրականության[16] և անհանդուրժողականության հետ

---

[12] Ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ ազգային մակարդակով պայքարի մասնագիտացված մարմինների մասին:

[13] Իշխանությունների տրամադրած տվյալների համաձայն՝ 2009-ին այն ավելացել է 6,8%-ով:

[14] Տե՛ս Կարծիքների մթնոլորտը, Լրատվամիջոցները, Քաղաքական քննարկումները:

[15] ՌԱԵՀ-ի մանդատի հետ կապված հարցերն անխուսափելիորեն շոշափվում են:

[16] ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ համաձայն Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականի՝ կրոնական հողի վրա արվող խտրականությունը ռասայական խտրականության մի տեսակ է:

կապված՝ ազգային և միջազգային նորմերի վերաբերյալ: Այն համարում է, որ Արդարադատության ակադեմիայի հիմնումն այս առումով նոր հնարավորություններ է բացում դատավորների, դատախազների և փաստաբանների համար: Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին, ՌԱԵՀ-ն այն կարծիքին է, որ ռասիզմի և ռասայական խտրականության հարցերով հատուկ վերապատրաստումը կարելի է հեշտությամբ հարմարեցնել գոյություն ունեցող պայմաններին:

37. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է, որպեսզի դատավորները, իրավապահ մարմինների աշխատակիցները և փաստաբանները ռասիզմի, ռասայական խտրականության և անհանդուրժողականության հետ կապված ազգային և միջազգային նորմերի վերաբերյալ հատուկ վերապատրաստում անցնեն:

II. Խտրականություն տարբեր բնագավառներում

38. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել էր, որ Հայաստանի իշխանությունները հետազոտություններ կատարեն էթնիկական փոքրամասնությունների հետ կապված իրավիճակը ճշտելու համար այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են աշխատանքը, բնակությունը և կրթությունը՝ գնահատելու և ուսումնասիրելու համար ցանկացած խտրականություն, որ կարող է հանդիպել:

39. ՌԱԵՀ-ը տեղյակ չէ կատարվող նման հետազոտություններին[17]:

40. ՌԱԵՀ-ի ունեցած տեղեկատվության համաձայն՝ աշխատանքի բնագավառում կրոնական փոքրամասնությունների դեմ տեղ գտած խտրականության շատ քիչ դեպքեր են եղել (և մի դեպք՝ կապված էթնիկական փոքրամասնության անդամի հետ). տուժածներից ոմանք դատի են տվել, և նրանց հայցերը բավարարվել են:

41. ՌԱԵՀ-ը նաև տարբեր աղբյուրներից տեղեկատվություն է ստացել դպրոցում կրոնական փոքրամասնություն հանդիսացող աշակերտների դեմ խտրականություն դրսևորելու պնդումների մասին[18]: Համաձայն այդ պնդումների՝ նրանցից ոմանք դարձել են ծաղրի առարկա, մյուսները հարցումների ենթարկվել իրենց հավատքի վերաբերյալ և ուրիշներն էլ ստիպված են եղել ներկա գտնվել այնպիսի ժողովների (որոնց հրավիրված են եղել դպրոցի աշակերտների մեծամասնությունը), որտեղ նրանց կրոնը ձեռք է առնվել կամ խարանվել որպես վնասակար:

42. ՌԱԵՀ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին բոլոր դպրոցների տնօրեններին և ուսուցիչներին հիշեցնել կրոնական բազմակարծիքությունը հարգելու իրենց պարտականության մասին:

---

[17] Խորհրդարանին ներկայացված Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը էթնիկական փոքրամասնությունների վերաբերյալ այլ նպատակ էր հետապնդում:

[18] Այդ պնդումները չեն վերաբերում եզդի աշակերտներին, տե՛ս Խոցելի/Թիրախային խմբերը, էթնիկական փոքրամասնությունները:

III. Կարծիքների մթնոլորտը, լրատվամիջոցները, քաղաքական քննարկումներ

43. Ինչպես նշված է այս զեկույցի տարբեր մասերում, Հայաստանում այսօր բնակվող էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ գոյություն չունի բացահայտ թշնամանք[19]:

44. Շատ խրախուսիչ է նաև այն, որ գոյություն ունեն շատ քիչ կամ ընդհանրապես բացակայում են հակամահմեդական զգացմունքները: Օրինակ՝ բազմաթիվ իրանցիներ, ովքեր Հայաստան են գալիս սովորելու, բիզնեսի համար կամ որպես տուրիստ, առանձնակի խնդիրների հետ չեն բախվում:

45. Որոշ մտավախություններ են արտահայտվել, որ հնարավոր են փոփոխություններ տեղ գտնեն այն իմաստով, որ հայերի աճող ազգային զգացմունքները կարող են սասանել ինչպես բազմաէթնիկ հանդուրժողականության ավանդույթը, այնպես էլ ստեղծել երկարաժամկետ խնդիրներ, օրինակ այն դեպքում, եթե ապագայում ևս շարունակվի դեպի ներս ուղղված միգրացիոն ճնշումը: ՌԱԵՀ-ն ուշադրություն է հրավիրում այդ մտավախությունների վրա, թեև նկատում է, որ ներկայումս դա ապացուցող չնչին վկայություններ կան:

46. Միակ բնագավառը, որտեղ առկա են անհանդուրժողականության բացահայտ վտանգներ, կրոնական ազատությունների բնագավառն է: Չնայած ավանդական խմբերը, ինչպես օրինակ եզդիները և հրեաները, չեն դիտարկվում որպես սպառնալիք[20], հասարակությունը տագնապով է վերաբերվում[21] Հայաստանում նոր եկեղեցիներ հիմնելու փորձերի մեծամասնությանը: Որոշ բողոքականներ, կրիշնայականներ և Եհովայի վկաներ դառնում են մեծաքանակ բացասական հրատարակումների թեմա լրատվամիջոցների կողմից, այնպիսի մեղադրանքներով, որ՝ «նրանք սպառնում են երկրի հոգևոր անվտանգությանը»: Շարունակ անց են կացվում նրանց դեմ պաստառներ փակցնելու միջոցառումներ: Երբեմն վերաբերմունքը դառնում է ագրեսիվ[22]: Եհովայի վկաները քննադատության թիրախ են դառնում առանձնապես այն բանի համար, որ առարկում են զինվորական ծառայություն անցնելուն, ինչը սասանում է երկրի պաշտպանունակությունը: Նման վերաբերմունքը ծագել է մասամբ և այն զգացողությունից, որ կրոնական նոր շարժումները նվազեցնում են հայերի ազգային նույնականությունը, ինչի մարմնավորում է դիտարկվում Հայ Առաքելական եկեղեցին: ՌԱԵՀ-ը լավատեղյակ է Հայ Առաքելական եկեղեցուն վերագրվող առավելություններին, բայց կվերաբերվի դրանց ինչպես անհաջող ձևակերպումների, եթե դրանք կխոչընդոտեն լայն իմաստով կրոնական բազմազանության ներգրավվածության զարգացումը:

47. Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին, ՌԱԵՀ-ը նշում է, որ գոյություն ունի ինքնակարգավորող փաստաթուղթ, որը պարունակում է դրույթներ անհանդուրժողականություն դրսևորելու դեմ: Դրան միացել են ոլորտի

---

[19] Որոշ էթնիկ խմբեր հայերի հետ միասին կիսում են պատմական հիշողությունները. ծանոթացիր Երևանում 1915թ. հայ և ասորի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցնելու պլաններին :

[20] Ըստ սահմանման՝ սրանք չեն մրցակցում Հայ Առաքելական Եկեղեցու հետ:

[21] Նրանցից ոմանք մեծ հաջողությունների են հասել: Օրինակ՝ Եհովայի վկաները պնդում են, որ ավելի քան 10000 հետևորդներ ունեն:

[22] Տե՛ս ռասայական հողի վրա կատարվող բռնությունները:

ներկայացուցիչները, բայց ոչ բոլորը: ՌԱԵՀ-ը տեղեկացվել է նաև, որ Հանրային խորհուրդն[23] այժմ աշխատում է Էթիկայի կանոնագրքի վրա՝ հանրապետության նախագահի հովանու ներքո: ՌԱԵՀ-ը հուսով է, որ Հայաստանը շուտով կունենա ինքնակարգավորող ճիշտ նույնպիսի մի փաստաթուղթ, որ ունեն ողջ աշխարհի լրատվամիջոցները. դա կարող է արդյունավետ գործիք դառնալ անհանդուրժողականության դեմ պայքարում այնպիսի հիմքի վրա, ինչպիսիք են «ռասան», գույնը, լեզուն, կրոնը, ազգային կամ էթնիկական ծագումը:

48. Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 24-րդ հոդվածն արգելում է հրահրել ազգային կամ կրոնական ատելություն կամ գժտություն: Դրա կիրառման պատասխանատուն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է: Այս մարմինը կազմված է ութ անդամներից (չորսին նշանակում է հանրապետության նախագահը, մյուս չորսին ձայների մեծամասնությամբ ընտրում է Խորհրդարանը), որն ի թիվս այլոց, իրավունք ունի սահմանել վարչական տույժեր: ՌԱԵՀ-ը նշում է, որ Հանձնաժողովին բողոքներ են ներկայացվել՝ կապված ռասիզմի և անհանդուրժողականության դրսևորումների հետ, ինչին հետևել են նկատողություններն ու զգուշացումները[24]: Սակայն վերջերս տեղ գտած միջադեպից հետո, որի մեջ էր ներգրավված հեռուստատեսության մասնավոր կայաններից մեկում հաղորդում վարող Արիացիների կուսակցության ղեկավարը, հրեական համայնքն այդ հարցով դիմել է անմիջապես Կառավարություն:

49. ՌԱԵՀ-ը գիտակցում է այն կարևոր դերը, որը Հանձնաժողովը կոչված է կատարելու այս ամենում, համարում է, որ Հանձնաժողովը կարիք ունի մասնագիտական գիտելիքների ձեռքբերման, ինչն անհրաժեշտ է իրականացնելու իրենց պարտականություններն այնպիսի մի նուրբ բնագավառում, ինչպիսին արտահայտվելու ազատությունն է՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ հանդերձ:

50. ՌԱԵՀ-ը առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները, առանց լրատվամիջոցների անկախությունը վնասելու, աջակցեն ինքնակարգավորող էթիկայի կանոնագրքի շուտափույթ ընդունմանը՝ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հստակ ձևակերպված դրույթներով: Այն առաջարկում է նաև, որպեսզի իշխանությունները անհրաժեշտ քայլ կատարեն աջակցելու միտումով, որպեսզի բոլոր լրատվամիջոցները միանան այդ փաստաթղթին:

51. ՌԱԵՀ-ն առաջարկում է վերապատրաստման դասընթացներ կազմակերպել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի այն անդամների համար, ովքեր պատասխանատու են Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 24-րդ հոդվածի կիրառման համար, թե ինչպես պահպանել հավասարակշռությունը արտահայտվելու ազատության և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջև:

---

[23] 2008-ի հունիսի 13-ին նախագահի հրամանագրով հիմնված խորհրդատվական մի մարմին է, որին ՈԿԿ-ները, քաղաքացիները և Սփյուռքի ներկայացուցիչները մասնակցում են կամավորական հիմունքներով:

[24] Հեռուստատեսային մասնավոր ԱԼՄ կայանը նույնպես ներողություն է խնդրել հակահրեական հայտարարությունների համար: Դա Արիացիների կուսակցության ղեկավարի հետ կապված միջադեպի առիթով չէր:

52. ՌԱԵՀ-ը նշում է նաև, որ Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 28-րդ հոդվածում արված փոփոխությունների արդյունքում, մասնավոր կայաններում էթնիկական փոքրամասնությունների ծրագրերին հատկացվող ժամանակն արդեն զերծ է սահմանափակումներից:

53. Ինչ վերաբերում է քաղաքական քննարկումներին, ՌԱԵՀ-ը նշում է, որ նախագահական վերջին ընտրարշավի ժամանակ փորձ արվեց հակահրեական տրամադրություններ հրահրել ընդդիմադիր մի թեկնածուի հանդեպ, ում կինը հրեական ծագում ունի: Դա արտահայտվեց սիոնիստական դավադրության մասին պնդումներով, ինչն իր արձագանքը գտավ հիմնական թերթերում տպագրված մի քանի հոդվածներում և հանրային հեռուստատեսությամբ:

54. ՌԱԵՀ-ի կարծիքով հարկ է, որ այս միջադեպի քաղաքական պատասխանը (որը թույլ էր) կտրուկ հակադարձեր Արիացիների կուսակցության առաջնորդի կողմից արված հակահրեական մեկնաբանություններին: Վերջինս խստորեն դատապարտվել է մնացած բոլոր քաղաքական կուսակցությունների կողմից, որոնք մասնակցել են կլոր սեղանի շուրջ տեղի ունեցած հանդիպմանը: Ավելին, Կառավարությունը քննադատության է ենթարկել հեռուստատեսության այն կայանին, որը նրան եթեր էր տրամադրել[25]: ՌԱԵՀ-ն այդ ամենը գովելի է համարում:

55. ՌԱԵՀ-ը նաև հաշվի է առել այն փաստը, որ նախկինում ևս Արիացիների կուսակցության առաջնորդի նկատմամբ տեղ են գտել քրեական դատավարություններ և որ այդ շարժումը ծայրահեղ մարգինալ բնույթի է:

56. ՌԱԵՀ-ն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ուշադրություն դարձնել այն պայմանների վրա, որոնցում գործում է Արիացիների կուսակցությունը: Իրենց ուսումնասիրությունների արդյունքում նրանք պետք է որոշեն, թե արդյոք պահանջվում են լրացուցիչ գործողություններ: Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ը հղում է անում Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականի համապատասխան բաժինների վրա:

57. Ինչ վերաբերում է էթնիկական վիրավորանքներին[26], ՌԱԵՀ-ը տեղեկացվել է հայերեն այն նվաստացուցիչ բառի[27] մասին, որն օգտագործվում է գնչուական ծագման և քոչվոր կյանքով ապրող մի խումբ անձանց բնութագրելու համար: Այս խմբի անդամների ժառանգները լայնորեն ասիմիլյացիայի են ենթարկվել, նրանք խոսում են հայերեն[28], Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդներ են և չունեն առանձնահատուկ սովորույթներ ու ավանդույթներ: Սակայն շատ հաճախ նրանց հարևանները տեղյակ են նրանց անցյալից: Այս անձինք խորապես վիրավորվում են, երբ նույն այդ բառով ուրիշները կոչում են իրենց:

58. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները մտածեն, թե ինչպես լավագույնս պայքարեն վերը հիշատակված այդ էթնիկական վիրավորանքի դեմ առանց անարգելու քոչվոր խմբի որևէ ժառանգի, որոնց հետ այն սկզբնապես կապակցվել է:

---

[25] Տե՛ս 48-րդ կետը:

[26] Գովազդի մասին օրենքի 8-րդ (բ) հոդվածը նախատեսում է իր կիրառման շրջանակներում պաշտպանություն՝ կապված հարցի հետ:

[27] Այդ բառն է՝ «բոշա»:

[28] Սակայն շատ սահմանափակ թվով բառեր գոյատևել են և օգտագործվում են որպես ծածկագիր լեզու:

IV. Ռասիստական պատճառներով կատարված բռնություններ[29]

59. Հայաստանը չի բախվում ռասայական պատճառներով կատարվող բռնությունների մի առանձնակի խնդրի հետ: Արդեն իսկ հիշատակվել են հրեական հուշարձանների հետ կապված միջադեպը և Եհովայի վկաների դեմ կատարված մի քանի ֆիզիկական հարձակումները[30]:

60. Այս վերջիններիս քանակն ընդունելիորեն փոքր է, բայց դրանք մտահոգությունների տեղիք են տալիս առանձնապես այն ֆոնի վրա, երբ ձևավորվում է կարծիքների բացասական մթնոլորտ: Այս բացասական մթնոլորտը տարբեր ձևեր է ընդունում: Օրինակ՝ շարունակաբար իրականացվում են պաստառային միջոցառումներ, որոնք կոչ են անում հայերին մասնակցելու իրենց շենքերում կամ իրենց հարկերում աղանդների[31] հակազգային և այլասերող գործունեության դեմ մղվող պայքարին: Տեղ է գտել անհայտ մեկի կողմից արված խոստովանություն, ով ուժեղ հարված է հասցրել իր դուռը ծեծած, Եհովայի վկաների գրականությունը տարածող մի երիտասարդի, որը և հրատարակվել էր հիմնական թերթերից մեկում՝ 2010թ. մարտի 11-ին:

61. Կարծիքների բացասական մթնոլորտը կրկին կապված է Եհովայի վկաների հետ, երբ փորձ է արվել հրկիզել նրանց պաշտամունքային վայրերից մեկը: Դա առնչվում է Վանաձորում 2009թ. ապրիլին և մայիսին տեղ գտած Եհովայի վկաների պաշտամունքի կենտրոնի հասցեին հնչած բռնության սպառնալիքների և գողության դեպքերի հետ, որով մեծ վնաս էր հասցվել շինությանը, մինչև որ ոստիկանները վերջ էին դրել այդ ամենին:

62. ՌԱԵՀ-ը համարում է, որ իշխանությունները պետք է ձեռնարկեն վճռական քայլեր, ինչը որ նրանք հստակորեն ցույց են տվել, որ ընդունակ են անելու՝ կանխելու համար եզակի միջադեպերի վերաճումը լայնամասշտաբ խնդրի:

63. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ քրեական օրենսդրությունը արդյունավետորեն կիրառվի ռասիստական պատճառներով կատարված բռնությունների և սադրանքների ժամանակ:

V. Խոցելի /Թիրախային խմբեր

Ազգային փոքրամասնություններ

64. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն արել է մի շարք առաջարկություններ. որոնք վերաբերում են. (1) ընդունել ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը միտված օրենսդրական դաձտը, (2) ավելի շատ խորհրդաձել, ներգրավել և ներկայացնել ազգային փոքրամասնություններին, (3) նպաստել ազգային փոքրամասնությունների և մնացած ազգաբնակչության միջև լավ հարաբերությունների ձևավորմանը, (4) ազգային փոքրամասնություններին և ֆինանսական օգնության տրամադրմանը, (5) Ազգային փոքրամասնությունների և կրոնական գործերի վարչության լիազորություններին և միջոցներին, (6) Էթնիկական փոքրամասնությունների կոորդինացիոն խորհրդի ավելի ակտիվ դերին: Երկրորդ զեկույցում առկա

[29] ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ Ընդհանուր քաղաքականության թ. 7 հանձնարարականի համաձայն՝ ռասայական դրդապատճառները պետք է վերաբերվեն, ի թիվս այլոց, կրոնին:

[30] Բոլոր նման միջադեպերի մասին չէ, որ տեղյակ է պահվել ոստիկանությանը:

[31] Խնդրո առարկա պաստառները ստորագրված էին մի անձի կողմից՝ «Մեկ Ազգ կազմակերպությունների դաշինքի» անունից;

մյուս առաջարկությունները վերաբերում էին. (1) բարձրագույն կրթության մատչելիությանը ազգային փոքրամասնությունների համար, (2) ազգային փոքրամասնությունների համար ուսուցիչների պատրաստմանը, (3) դասագրքեր ազգային փոքրամասնության երեխաների համար և (4) երկլեզու և ռուսաց լեզվի ուսուցման բարելավմանը: Եվ վերջապես իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել էր ավելացնել փոքրամասնությունների ներկայությունը լրատվամիջոցներում:

65. ՌԱԵՀ-ն ընդգծում է Հայաստանի իշխանությունների գործադրած զգալի ջանքերը ազգային փոքրամասնությունների կրթության և մշակույթի բնագավառում: Երկրի տնտեսական զարգացման ներկա փուլում դա ցույց է տալիս նրանց դրական վերաբերմունքը խնդրին, ինչը ՌԱԵՀ-ը գտնում է գովեստի արժանի: ՌԱԵՀ-ը համարում է, որ հարակից խնդիրների մեծ մասը[32], որ վերաբերում են թիրախային օգնության ցուցաբերման մշտական միջոցառումներին ամբողջությամբ առնչություն ունեն Եվրոպայի Խորհրդի երկու այլ մասնագիտացված մոնիտորինգային մեխանիզմների հետ, որոնք գործում են ազգային փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային կից: Իսկ արդյունքում, ՌԱԵՀ-ն իր ուշադրությունը կկենտրոնացնի ազգային խտրականության վերաբերյալ պնդումների և այլ կերպ ասած՝ այն բողոքների վրա, թե իրենց էթնիկական ծագման պատճառով անհատներն ունեն ավելի պակաս իրավունքներ:

66. Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ հարցերին, ՌԱԵՀ-ը համարում է, որ Ազգային փոքրամասնությունների և կրոնական գործերի վարչությունը, որը գործադիր իշխանության մաս է կազմում, կարևոր դերակատարում ունի ազգային խտրականության դեմ մղվող պայքարում: Նա մոնիտորինգի է ենթարկում իրավիճակը, խորհուրդներ է տալիս կառավարությանը և բարձրացնում քաղծառայողների իրազեկվածությունը: ՌԱԵՀ-ի կարծիքով՝ Վարչության տրամադրության տակ դրված միջոցներն անհամատեղելի են նրա վրա դրված պատասխանատվության հետ:

67. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է Ազգային փոքրամասնությունների և կրոնական գործերի վարչությանը տրամադրել լրացուցիչ միջոցներ, որպեսզի այն ընդունակ լինի ավելի արդյունավետորեն պայքարել ռասայական խտրականության դեմ:

68. Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնություններին հատկացվող ֆինանսական օգնությանը, ՌԱԵՀ-ը նշում է, որ ամեն տարի 9 միլիոնի դրամաշնորհ է տրամադրվում էթնիկական փոքրամասնությունների կոորդինացիոն խորհրդին՝[33] ներկայացված կազմակերպությունների միջև բաժանելու համար: 11 ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրն իրենց կազմակերպության միջոցով ստանում է միևնույն քանակի գումար (818000 հայկական դրամ)՝ անկախ իր անդամների քանակից: Արդյունքում մեծաքանակ փոքրամասնությունները, ինչպիսիք են եզդիները, ստանում են

[32] Ներառյալ ազգային փոքրամասնությունների մասին օրենքի ընդունումը, որը, ինչպես երևում է, դադարել է գերակա լինել իշխանությունների և նրանից առավելություններ ակնկալող խմբերի համար:

[33] Կոորդինացիոն խորհուրդը կազմված է 11 ազգային փոքրամասնությունների յուրաքանչյուրից երկուական ներկայացուցիչներից: Այն հիմնվել է նախագահի հրամանագրով և որի նախագահն է Հանրապետության նախագահի խորհրդականներից մեկը:

միևնույն գումարի օգնություն, ինչպես և շատ փոքր թիվ կազմողները, ինչպես օրինակ՝ հույները[34]: ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ տարբեր իրավիճակների նկատմամբ ցուցաբերած միատեսակ վերաբերմունքը որոշակի հանգամանքներում նույնն է, ինչ խտրականությունը[35]: Իշխանությունները պետք է մշակեն այնպիսի մի համակարգ, որտեղ դրամաշնորհը բաժանվի յուրաքանչյուր ազգային փոքրամասնության իրական կարիքներին համապատասխան:

69. ՌԱԵՀ-ն առաջարկում է հրաժարվել էթնիկական փոքրամասնությունների կոորդինացիոն խորհրդի տրամադրության տակ դրվող դրամաշնորհը անկախ յուրաքանչյուր փոքրամասնության քանակի հավասարապես բաժանելու գործող համակարգից և այն փոխարինել մի համակարգով, որտեղ դրամաշնորհը կբաժանվի յուրաքանչյուր ազգային փոքրամասնության իրական կարիքներին համապատասխան:

70. ՌԱԵՀ-ը դիտարկել է, որ, մեծ հաշվով, Հայաստանում կա երեք տեսակի «միջնակարգ դպրոց» [36] (1) նրանք, որ նախատեսված են հայերենով ուսումնական ծրագրերի համար, որոնք ունեն նաև ռուսերեն դասարաններ և երբեմն ուսուցանում են փոքրամասնության լեզուները՝ որպես արտածրագրային առարկաներ[37], (2) նրանք, որ ունեն հայերենով/փոքրամասնության լեզուներով ուսումնական ծրագրեր (նույնպես կան ռուսերեն դասարաններ) և (3) նրանք, որտեղ ռուսերենը կրթության հիմնական լեզուն է (այսուհետ՝ «Ռուսական դպրոցներ»)[38], ազգային փոքրամասնությունների աշակերտները հաճախ հաճախում են հենց այս դպրոցները (ամեն դեպքում, օգտվելով իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու առավելությունից): Ռուսական դպրոցի շրջանավարտները սովորաբար շարունակում են իրենց ուսումը Երևանի (ռուս-հայկական) սլավոնական համալսարանում կամ Ռուսաստանի Դաշնության բարձրագույն ուսումնական հաստատություններում:

71. Ինչ վերաբերում է հավասար հնարավորություններին, ՌԱԵՀ-ը տեղեկացվել է, որ ազգային փոքրամասնությանը պատկանող որոշ երեխաներ տարրական դպրոց են գալիս՝ չտիրապետելով այն լեզվին, որով առարկաներից շատերը դասավանդվում են: Սա վերաբերում է ռուսական դպրոցներ հաճախող ասորի երեխաներին և մեծամասամբ եզդիներով բնակեցված գյուղերում ապրող որոշ երեխաների, ովքեր հաճախում են դպրոցներ, որտեղ ուսումնական ծրագրերը նախատեսված են հայերեն և եզդիերեն լեզուներով: Այս երեխաների նման

---

[34] Վերջին մարդահամարը, որը կատարվել է Հայաստանի մասին ՌԱԵՀ-ի երկրորդ զեկույցից առաջ, տվել է հետևյալ թվերը, որոնք հղված են այստեղ միայն այն նպատակով, որպեսզի ընդգծեն այս խնդրի կարևորությունը. 40620 եզդիներ ի համեմատ 1176 հույների:

[35] Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի՝ 2000թ. ապրիլի 6-ի դատավճիռը, «44:

[36] (Կախված այն բանից, թե նրանք բարեփոխվել են, թե՝ ոչ) միջնակարգ դպրոցներն ունեն կամ 11 կամ 12 աստիճաններ, որն ընդգրկում է այն, ինչը այլ երկրներում կոչվում է «տարրական» և «միջնակարգ» կրթություն:

[37] Տարերայնորեն սկիզբ առած այլ նախաձեռնությունները ներառում են Կիրակնօրյա դպրոցներ՝ փոքրամասնությունների լեզուները ուսուցանելու համար:

[38] Գոյություն ունեն նաև վեց դպրոցներ Ռուսաստանի Դաշնության զինծառայողների երեխաների համար, որոնց նկատմամբ Հայաստանի իշխանությունները իրականացնում են նվազագույն հսկողություն:

վիճակը հատկապես մանկապարտեզների բացակայության հետևանք է: Սա, իհարկե, ողջ հասարակության խնդիրն է, քանի որ այն վերաբերում է մունիցիպալ կազմավորումների բյուջետային իրավիճակին, կազմավորումներ, որոնք պետք է ապահովեն նախադպրոցական կրթություն:Ամեն դեպքում այն ավելի վատ է անդրադառնում հենց ազգային փոքրամասնությունների անդամների վրա առավել մեծ չափով, քան ուրիշների, քանի որ հենց մանկապարտեզում է , որ նրանք պետք է ձեռք բերեն լեզվական այն ունակությունները, որ իրենց մոտ բացակայում են:

72. ՌԱԵՀ-ն առաջարկում է գերակայությունը տալ մանկապարտեզների բացմանը ազգային փոքրամասնություններով բնակեցված այն համայնքներում, որտեղ երեխաները չունեն անհրաժեշտ լեզվական հմտություններ տարրական դպրոց հաճախելու համար:

73. Եվ չնայած օրենսդրությունը նպաստում է ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում մանկապարտեզների բացմանը (թույլատրելով նվազեցնել երեխաների նվազագույն անհրաժեշտ քանակը), դա ինքնին չի կարող ապահովել խնդրի լուծումը: ՌԱԵՀ-ի կարծիքով՝ ֆինանսական աջակցություն է անհրաժեշտ:

74. Հավասար հնարավորություններին վերաբերող մի այլ խնդիր է հանդիսանում միջնակարգ դպրոցն ավարտած ազգային փոքրամասնությունների աշակերտների մատչելիության հարցը բարձրագույն ուսումնական հաստատություններ: ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանի իշխանությունները որոշ քայլեր են ձեռնարկել դա հեշտացնելու համար. ամեն տարի կառավարական մակարդակով որոշում է կայացվում որոշակի բացառություններ անել ընդունելության քննությունների սովորական կարգից՝ հօգուտ վերը նշված նպատակի: Դրանով խիստ սահմանափակ թվով անձինք են հնարավորություն ունեցել օգտվել ընձեռված արտոնությունից: ՌԱԵՀ-ը միշտ համարել է, որ հօգուտ փոքրամասնությունների կատարող ժամանակավոր դրական քայլերը որոշակի հանգամանքներում անհրաժեշտ են դե ֆակտո գոյություն ունեցող տարբերությունները վերացնելու համար: Հանձնաժողովի կարծիքով՝ այժմ, երբ իշխանություններն արդեն իսկ որոշակի ժամանակ է, ինչ փորձնական քայլեր են ձեռնարկել մատչելիությունը հեշտացնելու նպատակով, կարելի է նաև հատուկ կարգավորումները ձևակերպել պաշտոնապես: Կարելի է ընդունել օրենք, որը կհեշտացնի բարձրագույն կրթություն ստանալու մատչելիությունը միջնակարգ դպրոցն ավարտած ազգային փոքրամասնությունների աշակերտների համար: Դա, ամենայն հավանականությամբ կազդի, որպեսզի ազգային փոքրամասնություններից ավելի շատ ուսանողներ ընդունվեն բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ավելին, դա կօգնի իշխանություններին՝ լուծելու ոքրամասնությունների լեզուները դասավանդող ուսուցիչների պակասի խնդիրը, որը քննության է առնված երկրորդ զեկույցում:

75. ՌԱԵՀ-ն առաջարկում է ընդունել օրենք, որը կհեշտացնի միջնակարգ դպրոցի ազգային փոքրամասնությունների շրջանավարտների համար մատչելիությունը դեպի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

76. Ինչ վերաբերում է ազգային հանդուրժողականությանը աջակցելու գործում կրթական համակարգի ունեցած ներդրմանը, ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ բազմամշակութային հասարակություններում Պետությունը պարտավորություն է կրում դպրոցներում դաստիարակել փոխադարձ հարգանքի, ըմբռնման և երկխոսության ոգի: Չնայած ազգային

փոքրամասնություններն իրավունք ունեն ստանալ այնպիսի կրթություն, որը համապատասխանում նրանց կարիքներին և ինքնաճանաչողությանը, իշխանությունները պետք ապահովեն, որ վերը նշված արժեքները, ինչն էական է ցանկացած ինտեգրված հասարակության համար, իրենց արտահայտությունը գտնեն դպրոցական ծրագրերում և դասագրքերում: Դրան հասնելու համար անհրաժեշտ է պետության նվազագույն վերահսկողություն:

77. ՌԱԵՀ-ն ընդունում է, որ Հայաստանի իշխանությունները կարևոր քայլեր են ձեռնարկել արդիականացնելու համար փոքրամասնությունների կրթությունը: Կրթության նախարարությունը զգալի ջանքեր և միջոցներ է ներդնում ազգային փոքրամասնությունների լեզուների մեծ մասին ուսուցման համար դասագրքեր և ուսումնական ծրագրեր կազմելու գործում (ինչին զգալի ներդրում ունեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները)[39]: Ամեն դեպքում, սակայն, գործընթացը հեռու է ավարտված լինելուց (օրինակ՝ որոշ դասարանների համար եզդիերեն մատչելի միակ գրքերը մինչ այժմ հիշատակում են Լենինին): Ավելին՝ ՌԱԵՀ-ը նկատել է նաև որոշ կենտրոնախույս միտումներ. առանձին դպրոցների իրավունք է տրված օգտվել այլընտրանքային կրթական նյութերից (օրինակ՝ ՌԱԵՀ-ի պատվիրակության կողմից այցելած ասորական գյուղերից մեկում փորձ է արվել դասագրքեր ներկրել արտասահմանից). ավելին՝ ռուսական դպրոցներում, ուր հաճախում են ազգային փոքրամասնությունների շատ աշակերտներ, մինչ օրս օգտվում են Ռուսաստանի Դաշնությունից ստացված ուսումնական նյութերով[40]:

78. ՌԱԵՀ-ը տեղյակ է այն բարդություններին, որոնց բախվում են իշխանությունները և տարբեր ֆինանսական դժվարություններին: Եվ ոչ մի ցանկություն չունի քննադատելու ներկայումս օգտագործվող դասագրքերը: Ամեն դեպքում, սակայն, ուշադրություն է հրավիրում այն ակնհայտ ռիսկերի վրա, որ պետության կողմից դպրոցական ծրագրերի նկատմամբ ունեցած համարժեք վերահսկողության պակասը կարող է ծնել: Ի շարս այլ բաների, դա կարող է չեզոքացնել ինտեգրված և, վերջին հաշվով, հանդուրժողական հասարակություն ստեղծելուն ուղղված ջանքերը:

79. ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին առաջարկում է հետևողական քայլեր ձեռնարկել ստեղծելու համար օգտագործվող դասագրքերի ամբողջական շարքը և համապատասխան ուսումնական ծրագրերը՝ (ա) ռուսական դպրոցների համար, (բ) ռուսաց լեզվի ուսուցանման համար մնացած բոլոր դպրոցներում և (գ) փոքրամասնությունների բոլոր լեզուների ուսուցանման համար:

80. Ի հավելումն վերը նշված առաջարկների, որ ընդհանուր են բոլոր ազգային փոքրամասնությունների համար, ՌԱԵՀ-ն իր երկրորդ զեկույցում առաջարկություններ է արել նաև հետևյալ հարցերի շուրջ, որոնք վերաբերում

---

[39] Ամեն դեպքում փոքրամասնությունների լեզուների պաշտոնապես հաստատված որոշ դասագրքեր քննադատության են ենթարկվում ինչպես նրանց կողմից, ում համար դրանք ստեղծվել են , այնպես էլ իշխանությունների կողմից:

[40] Հայաստանի իշխանությունները հավաստիացրել են ՌԱԵՀ-ին, որ առաջինը՝ ԱՊՀ երկրներում այնքան էլ մեծ չէ դպրոցներում ուսումնական ծրագրերի տարբերությունը, և երկրորդը՝ ռուսական դպրոցների աշակերտների համար կազմվել են Հայաստանի պատմության հատուկ դասագրքեր:

են մասնավորապես եզդիներին. (ա) հողի, ջրի և արոտավայրերի իրավունքը, (բ) կյանքի կենսապայմանները Զովունիում,(գ) կրթության մատչելիությունը և վերաբերմունքը և (դ) վերաբերմունքը բանակում[41]:

81. ՌԱԵՀ-ը նշում է, որ իշխանությունները, ներառյալ Մարդու իրավունքների պաշտպանը, հետաքննել և մերժել են եզդիների բողոքները հանրային ծառայության տրամադրման վերաբերյալ[42]: Այն նաև նշում է, որ եզդիներն ազատորեն կարող են մասնակցել արոտավայրերի համար անցկացվող աճուրդներին, իսկ արոտավայրերը քիչ չեն: Հայաստանի իշխանությունները բացատրություն են տվել, որ 90-ականների սկզբին որոշ եզդիներ չեն կարողացել մասնակցել Զովունի գյուղում սեփականաշնորհման գործընթացին: Ավելին՝ իշխանությունները կարողացել են բավարարել ավելի քան 100 եզդի ընտանիքների խնդրանքը՝ սեփականաշնորհել իրենց տները: Չկան լուրջ վկայություններ, որ նրանց հանդեպ անհամապատասխան վերաբերմունք են դրսևորում դպրոցում կամ բանակում[43]:

82. Եզդիների որոշ ներկայացուցիչների ուշադրությունը ներկայումս բևեռվել է այն բանի վրա, որ իշխանությունները իբրև թե փորձ են անում նախապատվությունը տալ քրդերին իրենցից: ՌԱԵՀ-ի համար առանձին ազգային պատկանելիության մերժումը կհանդիսանա անհանդուրժողականության դրսևորման ծայրահեղ արտահայտություն: Ամեն դեպքում, սակայն, ՌԱԵՀ-ն այս պնդումներն ապացուցող ոչ մի առանձին վկայություն չունի և հստակ արտահայտված հավաստիացումներ է ստացել, որ պաշտոնական քաղաքականությունը եզդիներին և քրդերին վերաբերող հարցում[44], դա՝ ազատ ինքնաճանաչողության սկզբունքի հիման վրա այդ խնդրին լուծում տալու մոտեցումն է, ինչը միանգամայն համահունչ է ՌԱԵՀ-ի համոզմունքներին:

83. Միևնույն ժամանակ ՌԱԵՀ-ը տարբեր աղբյուրներից տեղեկություններ է ստացել, որ որոշ դպրոցների տնօրեններ չեն քաջալերում եզդի ծնողներին առաջարկելու ներառել եզդիերեն լեզվի դասավանդումը ուսումնական ծրագիր: Թեև ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքները ենթակա են բավարարման միայն ըստ պահանջի, ՌԱԵՀ-ը համարում է, որ շատ եզդիների սոցիալական դրությունը չի կարող նպաստել նրանց կողմից իրենց երեխաների՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու առավելությունները գնահատելուն: Սակայն կենտրոնական

---

[41] Երկրորդ զեկույցում արված մյուս առաջարկությունը, որը վերաբերում է ոստիկանության կողմից դրսևորվող վերաբերմունքին, քննության կառնվի «Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագիծը» բաժնում:

[42] Մեկ այլ բողոք՝ կապված շինարարության թույլտվություն տալու հետ մի վայրում, որը համարվում է եզդիական գերեզմանոցի տարածք. այս զեկույցը կազմելու պահին դա քննվում էր Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

[43] ՌԱԵՀ-ը տեղեկատվություն է ստացել բանակի հետ կապված միայն մի բողոքի մասին, որը վերաբերում էր եզդի զորակոչիկի դեմ ծանր հանցագործություն կատարած մի մեղադրյալի նկատմամբ ակնհայտորեն թեթև պատիժ սահմանելուն: Ըստ երևույթին՝ դա կապված էր հանցագործի՝ հոգեկան խնդիրներ ունենալու հետ:

[44] Ամենաքիչը մեկ եզդիական կազմակերպություն պատկանել է քրդական քողարկված մի միության. բոլոր դեպքերում նրանց մեծ մասը գտնվել են վերջինիս հետ հակամարտության մեջ: Կոորդինացիոն խորհրդին տրամադրված դրամաշնորհից եզդիական մասը բաշխվում է հետևյալ կերպ՝ 200000 դրամ հատկացվում է մի միության, որը պատկանում է քրդական քողարկված միությանը և 618000 դրամ՝ մյուսներին:

իշխանությունների համար կարևոր է ապահովել, որպեսզի ընտրությունը այս հարցում լինի ոչ միայն ազատ, այլ նաև գիտակցված, թե ինչքան մեծ է դրա արժեքը:

84. ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին առաջարկում է եզդի ծնողներին տեղեկացնել փոքրամասնությունների կրթության հարցում իրենց իրավունքների վերաբերյալ և դպրոցի տնօրեններին հիշեցնել իրենց պարտականության մասին՝ առաջինների համար հնարավորություն ապահովել կատարելու ազատ և տեղեկացված ընտրություն այդ կապակցությամբ:

85. ՌԱԵՀ-ի ուշադրությանը ներկայացրած մեկ այլ խնդիր է այն, որ շուրջ 30 եզդի ընտանիքներ Զովունիում ապրում են ապօրինի կառուցված տներում՝ ճիշտ բարձր լարման հոսանքի գծի տակ: Իշխանությունները պնդում են, որ իրենք չեն կարող տրամադրել նրանց սեփականաշնորհման վկայականներ՝ սպառնացող վտանգների պատճառով. ինչ վերաբերում է էլեկտրական լարերի տեղափոխմանը, ապա դա շատ թանկ կարժենա՝ համաձայն իրենց հանձնարարությամբ կատարված ուսումասիրությունների: Այդ ընտանիքները պատրաստ չեն ընդունելու իշխանությունների առաջարկությունը մեկ այլ վայրում իրենց ազատ հողակտորներ տրամադրելու վերաբերյալ այն պատճառով, որ դա խնդրի լուծում չէ, քանի որ իրենք չունեն նոր տներ կառուցելու համար դրամ:

86. ՌԱԵՀ-ը ընդունում է, որ այդ խնդրի հետ կապված՝ եզդիները խտրականության չեն ենթարկվում իրենց ազգային պատկանելիության պատճառով: ՌԱԵՀ-ը տեղյակ է նաև միջոցների պակասի պատճառով առաջացած նյութական ծանր վիճակին: Բայց միևնույն ժամանակ ՌԱԵՀ-ը գնահատում է դա որպես կարևոր խնդիր, շատ առանձնահատուկ բնույթի, որն իր ազդեցությունն է թողնում դրա հետ կապված խմբերից մեկի վրա և որը, սոցիալական համերաշխության շահերից ելնելով, պետք է ընկալվի շատ լուրջ: Հաշվի առնելով այն, որ Հայաստանի իշխանություններն այս վտանգավոր իրավիճակը հանդուրժել են շատ երկար ժամանակ[45], ՌԱԵՀ-ը համարում է, որ այժմ նրանք պետք է ակտիվորեն և աստիճանաբար ձգտեն ապահովել այդ ընտանիքների վերաբնակեցումը[46]:

87. ՌԱԵՀ-ն իշխանություններին առաջարկում է քայլեր ձեռնարկել Զովունի գյուղի այն եզդի ընտանիքներին, որոնք չեն կարողանում սեփականաշնորհման վկայականներ ստանալ իրենց տները բարձր լարման հոսքագծերի հարևանությամբ գտնվելու պատճառով՝ համարժեք տներ տեղափոխվելու համար:

88. Եվ վերջապես, ՌԱԵՀ-ը տեղեկացվել է, որ շատ եզդի երեխաներ՝ մասնավորապես աղջիկներ, դուրս են մնում դպրոցից: Դա ավելի շատ կախված է կրթության նկատմամբ նրանց ծնողների ունեցած մոտեցումից ընդհանրապես, քան այն վերաբերմունքից, որ նրանք դպրոցում ստանում են:

---

[45] Այն փաստը, որ տները կառուցվել են հոսքագծերն անցկացնելուց հետո, այս դեպքում վճռորոշ չէ:

[46] Հաշվի առնելով, որ առկա են այլ խմբերի կողմից մրցակից հանդիսացող պահանջներ (տե՛ս կ. 115), ՌԱԵՀ-ը հույս ունի, որ այս զեկույցը կօգնի իշխանություններին սահմանելու գերակայությունները:

89. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները եզդի երեխաների դպրոց հաճախելու հարցին հետևեն ավելի մոտիկից՝ համայնքային մակարդակով, և որպեսզի նրանք եզդի ծնողների մոտ բարձրացնեն իրազեկությունը կրթության առավելությունների վերաբերյալ:

Կրոնական փոքրամասնությունները

90. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել է իշխանություններին շարունակել պայքարը հակահրեականության դեմ՝ իր բոլոր դրսևորումներով հանդերձ և աշխատանք տանել հրեական համայնքի ներկայացուցիչների հետ: Նաև երկու առաջարկություն է արել, որոնք վերաբերում են Եհովայի վկաների՝ զինվորական ծառայությունից հրաժարվելու հետ կապված վերոհիշյալ հարցին:

91. ՌԱԵՀ-ը գոհունակությամբ նշում է իշխանությունների դրական դիրքորոշումը հրեական համայնքի նկատմամբ (սա ներառում է Եղեգիսում 800-ամյա գերեզմանոցի վերանորոգմանը ցուցաբերած օգնությունը):

92. ՌԱԵՀ-ը նշում է նաև, որ վերջերս իշխանությունները որդեգրել են բավական զգույշ մի դիրքորոշում՝ կապված Խորհրդարանի քննարկմանը ներկայացված մի օրինագծի հետ (որ նախկինում հովանավորվում էր ներկայիս կրթության նախարարի կողմից) փոփոխություններ մտցնել խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքում: Չնայած գործող օրենքն ազատ չէ վիճահարույց դրույթներից՝[47] դրանք չեն պարտադրվում կատարել[48]: Առաջարկվող փոփոխությունները նոր սահմանափակումներ կմտցնեն կրոնական ազատությունների մեջ. նման արդյունք կունենան, օրինակ, առաջարկվող դրույթները գրանցման և կրոնափոխության վերաբերյալ: Արդյունքում՝ առաջին ընթերցմամբ ընդունված օրինագիծը հարցականի տակ է դրվել ինչպես սկզբունքային, այնպես էլ առանձին մանրամասնությունների առումով Օրենքի միջոցով դեպի ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի, Մարդու իրավունքների և իրավական հարցերով Եվրոպայի Խորհրդի Տնօրինության և ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ Կրոնի և դավանանքի ազատության խորհրդատվական մարմնի կողմից[49]:

93. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքում փոփոխություններ կատարելու Օրինագիծը վերջնականապես հետ կանչվի: Եթե իշխանությունները որոշեն ընդունել նման նոր օրենք, ապա դա պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի և դրան առնչվող դրույթների հետ, ինչպիսի ոգով որ դա մեկնաբանվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դատավճիռներում:

94. ՌԱԵՀ-ի առանձնակի մտահոգության առարկա է նոր կրոնական փոքրամասնությունների գործունեության մեջ Ազգային անվտանգության ծառայության միջամտության մասին պնդումները: Դա, ինչպես տեղեկացնում են, ի թիվս այլ բացասական գործոնների, ստանում է սեփականատերերի վրա գործադրվող ճնշման ձև՝ վարձակալության չտալ տեղեր պաշտամունքի վայրի, հավաքների և անգամ համերգների համար: Այս կապակցությամբ նշվում է Հայաստանի բապտիստական եկեղեցու և նրանց հյուրը հանդիսացող

[47] Ինչպես, օրինակ, արտասահմանից ցուցաբերվող օգնության դեմ դրույթը:

[48] Ճշմարիտ է, որ հետևորդների նվազագույն քանակի պահանջը՝ ըստ 1997 թ. օրենսդրական փոփոխության, աճել է 50-ից մինչև 200, խոչընդոտում է կրոնական փոքր խմբերին գրանցվել:

[49] Կարծիք թ. 530/2009, CDL-AD(2009) 036:

«Օկլահոմայի երգող տղամարդիկ» երգչախմբի օրինակը,երբ նրանք ստիպված էին կեսից դադարեցնել իրենց ելույթը: ՌԱԵՀ-ը չունի այդ պնդումների մասին ապացույցներ: Ամեն դեպքում ի գիտություն է ընդունվել այն փաստը, որ Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը նորմալ է համարում, երբ Ավետարանական եկեղեցու ՈԿԿ-ի անդամները Գյումրիի իր գործընկերների կողմից հրավիրվում են «զրույցի»[50]:

95. ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ դավանանքը փոխելու և այն քարոզելու անձի իրավունքը, ինչպես և ուրիշների հետ աղոթելու իրավունքը գտնվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի պաշտպանության ներքո:

96. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Ազգային անվտանգության ծառայությունը զերծ մնա իրենից առանձնակի վտանգ չներկայացնող կրոնական գործունեությունը մոնիտորիգի ենթարկելուց:

97. ՌԱԵՀ-ի ուշադրությունը գրավել են նաև մի շարք հարցեր, որոնք վերաբերում են՝ (ա) այլընտրանքային ծառայություն կատարելուց հրաժարվող Եհովայի վկաների դրությանը (նրանց նշանակված պատժի տևողությունը, նրանց կրած պատժի իրական ժամկետը միչև բանտից պայմանական ազատումը, այն փաստը, որ համաներումը նրանց վրա երբեք չի տարածվում և ազատազրկման մեջ գտնվելու ժամանակ հոգևորականների կողմից այցելությունների արժանանալու նրանց իրավունքը[51], (բ) երեխայի խնամակալության հետ կապված գործը, որտեղ դատարանը քննադատում էր իշխանություններին Եհովայի վկա հանդիսացող երեխայի մոր նկատմամբ ցուցաբերած նրանց վերաբերմունքի համար[52] և (գ) վարչական դատարանում Եհովայի վկաների կողմից հարուցված գործի, որոնք վիճարկում են արտասահմանից կրոնական գրականություն ներկրելու համար իրենց կողմից վճարվող մաքսային տուրքերի չափը[53]: Ցանկություն չունենալով կանգնելու որևէ մի կողմի կողքին նշված հարցերում՝ ՌԱԵՀ-ն իր մտահոգություններն է հայտնում, որ այդ ամենը, միասին վերցրած, կարող են վկայել, թե ինչ բացասական լուսաբանման ներքո են տարբեր տեսակի իշխանություններ միտված նայելու Եհովայի վկաներին:

98. Բացի դրանից ՌԱԵՀ-ը նշում է, որ մի Եհովայի վկա, որը մեղադրվել էր զորակոչից խուսափելու մեջ, վերջերս ենթարկվել է մինչդատական կալանքի: ՌԱԵՀ-ը չի ցանկանում մեկնաբանություններ անել այդ առանձին դեպքի կապակցությամբ: Ամեն դեպքում այն հիշեցնում է, որ, համաձայն մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների, մինչդատական կալանք կարող է սահմանվել, եթե անհրաժեշտ է կանխել մեղադրյալին կատարելու հետագա իրավախախտումներ կամ դիմել փախուստի կամ կեղծել ապացույցները: Այն նաև հիշեցնում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝

---

[50] Բազմաթիվ աղբյուրների համաձայն՝ ոստիկանությունը միջամտում է ոչ միայն այն դեպքերում, երբ նոր կրոնական շարժումների արդյունքում կրոնափոխ են լինում Հայ Առաքելական եկեղեցու նախկին անդամները: Նրանք հետաքրքրություն են ցուցաբերում նաև եզդիների կրոնափոխության դեպքում:

[51]2010 թ. մարտի վերջի տվյալներով՝ 75 Եհովայի վկաներ ազատազրկման էին ենթարկվել զորակոչից խուսափելու համար: Կան տեղեկություններ նրանց վիճակի բարելավման մասին՝ ինչ վերաբերում է հոգևորական խնամքի մատչելիությանը:

[52] Ի վերջո վճիռ է կայացվել ի վնաս նրա:

[53] Այդ գործերից մի քանիսը տանուլ են տրվել:

Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի դատավճռում[54] նշել է այն առանձնահատուկ ձևը, որ զորակոչից խուսափելու իրավախախտումը պետք է ընկալվի, եթե այն կատարվել է խղճի դրդապատճառներով: ՌԱԵՀ-ը համարում է, որ իշխանությունները պետք է ողջ վերն ասվածը հաշվի առնեն՝ նախքան խղճի դրդապատճառներով որևիցե մեկին կալանքի տակ պահելը:

Ոչ քաղաքացիները

- *Փախստականներ և ապաստան փնտրողներ*

99. Ոչ քաղաքացիների հետ կապված խնդիրների մեծ մասը (ինչը վերաբերում է ՌԱԵՀ-ին, քանի որ այն արձագանքում է այն բանին, թե ինչպես է երկիրը հյուրընկալում եկվորներին) գործ ունեն փախստականների և ապաստան փնտրողների հետ: Նրանց ճնշող մեծամասնությունը ազգությամբ հայեր են, որոնք հայտնվել են երկրում կամ Ադրբեջանից կամ Իրաքից: Կան նաև փոքր թիվ կազմող ազգությամբ ոչ հայ փախստականներ և ապաստան փնտրողներ:

100. Այս խոցելի խմբի հետ կապված ամենակարևոր զարգացումը Փախստականների և ապաստանի մասին նոր օրենքի ընդունումն է, որը ուժի մեջ է մտել 2009 թ. հունվարի 24-ին՝ իր բոլոր ենթաօրենսդրական ակտերով: Այս նոր օրենքը ծրագրում է ապահովել Հայաստանին ժամանակակից կարգավորման շրջանակով նմանատիպ խնդիրների լուծման համար: Թեև այն համատեղ գործում է 2001 թ. ընդունված օրենքի հետ, որը նախատեսում է Հանրապետության նախագահի հայեցողությամբ «քաղաքական» դրդապատճառներով ապաստան տրամադրել: Տարբեր աղբյուրներ հավաստիացրել են ՌԱԵՀ-ին, որ այս վերջինս մնացել է որպես մեռած տառ[55]:

101. Ինչ վերաբերում է փախստականի կարգավիճակ շնորհելու ընթացակարգին, ՌԱԵՀ-ն իր երկրորդ զեկույցում Հայաստանի իշխանություններին առաջարկել է ստեղծել մի ծրագիր, որը կնախատեսի բոլոր սահմանապահների նախնական և շարունակական ուսուցումը փախստականներին վերաբերող միջազգային և ազգային օրենսդրության վերաբերյալ: Այն նաև առաջարկել է, որպեսզի ՓՄԱԳԼ-ը և ցանկացած այլ ոչ կառավարական կազմակերպություն, որը զբաղվում է փախստականներին և ապաստան փնտրողներին վերաբերող հարցերով, ստանա մուտք այն կետերը, ուր հավանաբար մարդիկ դիմում են ապաստան ստանալու նպատակով՝ ներառյալ Երևանի օդանավակայանը:

102. ՌԱԵՀ-ը նշում է, որ Երևանի օդանավակայանը և Իրանի հետ սահմանը հսկում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի սահմանապահները[56], իսկ Թուրքիայի հետ (փակ) սահմանը՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի զորքերը, Ադրբեջանի հետ (փակ) սահմանը՝ հայկական զորքերը և Վրաստանի հետ սահմանը՝ հայ սահմանապահները: Սահմանապահները պարտավոր են արձանագրել ապաստան ստանալու նպատակով իրենց տրված որևէ դիմում և փոխանցել այդ ապաստան փնտրողներին Միգրացիոն գործակալություն: ՌԱԵՀ-ը նշում է, որ միջազգային կազմակերպությունները հայ

---

[54] Հղում է արված վերևում:

[55] Առաջ է քաշվում այն տեսակետը, որ Քաղաքական ապաստան տրամադրելու մասին 2001թ. օրենքը շարունակում է գոյություն ունենալ միայն այն պատճառով, որ Հայաստանը պաշտոնապես պարտավոր է նման մի ընթացակարգ ունենալ ըստ Սահմանադրության:

[56] Երևանի օդանավակայանում գործում են համատեղ խմբեր, իսկ Իրանի հետ սահմանում Ռուսաստանի Դաշնության սահմանապահներն ունեն օպերատիվ վերահսկողության իրավունք:

սահմանապահների համար նախատեսում են ուսուցում՝ փախստականների վերաբերյալ միջազգային և ազգային օրենսդրության շուրջ: Պարզ չէ, թե արդյոք Ռուսաստանի Դաշնության սահմանապահները, ովքեր Հայաստանում ծառայում են երկու երկրների միջև կնքված համաձայնության հիման վրա, անցել են նմանատիպ ուսուցում:

103. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները շարունակեն իրենց ջանքերը համագործակցելու հարցի հետ առնչվող բոլոր գործընկերների հետ՝ ներառյալ ռուս պաշտոնյաները՝ ապահովելու համար, որպեսզի բոլոր սահմանապահները համարժեք ուսուցում ստանան փախստականներին վերաբերող օրենսդրության շուրջ:

104. ՌԱԵՀ-ը նշում է, որ ըստ ձեռք բերված պաշտոնական համաձայնությունների՝ Հայկական կարմիր խաչը ունի մուտքի իրավունք Երևանի օդանավակայան և բաց սահմաններ: ՓՄԱԳԼ-ի կողմից տպագրվում են պաստառներ և գրքույկներ, որտեղ տարբեր լեզուներով ապաստան փնտրողները ունեն անվճար իրավական օգնություն ստանալու իրավունք, որը նրանց է տրամադրվում ՈԿԿ-ների կողմից՝ ՓՄԱԳԼ-ի հետ կնքած համաձայնագրերի հիման վրա:

105. Ինչ վերաբերում է «հարկադրաբար հեռացնելու» սկզբունքին, ՌԱԵՀ-ը մտահոգությամբ նշում է, որ այդ սկզբունքը չի պահպանվել ապաստան փնտրող մի քրդի պարագայում. նրան Ինտերպոլի պահանջով 2010թ. հունվարի 14-ին ետ են վերադարձրել Թուրքիա[57]: Իշխանությունները պնդում են, որ նրա արտահանձնումը արդյունք էր վարչական փոխհամագործակցության պակասի. ապաստան խնդրելու քրդի դիմումը, որը ներկայացվել էր կալանավայրում 2009թ. դեկտեմբերի 13-ին (մի տարի Հայաստանում գտնվելուց հետո), Միգրացիոն գործակալություն էր հասել նրա արտահանձնումից հետո. ուշացման պատճառի մի մասը վերագրվել է տարեվերջյան արձակուրդներին: Իշխանությունները նաև հայտարարում են, որ իրենք քայլեր են ձեռնարկել ապահովելու համար, որ ապագայում նման սխալները չկրկնվեն:

106. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Միգրացիոն գործակալությունը անհապաղ տեղեկացվի ապաստան խնդրելու համար տրված բոլոր դիմումներին: Առաջարկում է նաև, որ Միգրացիոն գործակալությունը ամբողջ ժամանակ հնարավորություն ունենա զբաղվելու բոլոր հրատապ դեպքերով:

107. Ինչ վերաբերում է փախստականների և ապաստան փնտրողների սոցիալական ու տնտեսական իրավունքներին, ՌԱԵՀ-ն իր երկրորդ զեկույցում առաջարկել է բարելավել Երևանի ընդունման կենտրոնում բնակության պայմանները, որ ֆինանսական օգնություն տրամադրվի ժամանակավոր ապաստան շնորհված անձանց և որ իշխանությունները շարունակեն իրենց ջանքերը՝ հասարակության մեջ ներգրավելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով փախստական դարձած անձանց:

108. ՌԱԵՀ-ի պատվիրակությունը այցելել է ապաստան փնտրողների Երևանի ընդունման կենտրոն, որը գտնվում է Նոր Նորքում: ՌԱԵՀ-ը գոհունակությամբ նշում է, որ բնակության պայմանները այնտեղ բարելավվել են (ՓՄԱԳԼ-ի տրամադրած օժանդակության շնորհիվ, որն այդ նպատակների համար ֆինանսական միջոցներ էր ստացել Եվրամիությունից) և որ պայմանները նոր

[57] ՌԱԵՀ-ը նշում է, որ Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը վերաբերվում էր մի այլ դեպքի, որտեղ այս սկզբունքը կարող էր պահպանված չլինել, CommDH(2008)4, էջ 19, կ.89

մասնաճյուղում լավն են: Սակայն այցելության պահին նոր մասնաճյուղը դեռևս բնակեցված չէր. պատճառը ապաստան փնտրողների անվտանգությանը վերաբերող հարցերն էին[58]: Ավելին՝ հին մասնաճյուղը ակնհայտորեն վերանորոգման կարիք ուներ:

109. ՌԱԵՀ-ը հուսով է, որ անվտանգության խնդիրների հետ կապված լուծումը շատ արագ կգտնվի: Այն գնահատում է հարցի մոտեցման նկատմամբ իշխանությունների դրսևորած լուրջ վերաբերմունքը, թեև կրկին հիշեցնում է, ինչպես որ ներկայացված է այս զեկույցում, որ Հայաստանն առանձնապես չի բախվում ռասայական պատճառներով կատարվող բռնությունների հետ:

110. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Երևանի ընդունման կենտրոնի նոր մասնաճյուղը որքան հնարավոր է՝ շուտ սկսի գործել: Այն առաջարկում է նաև վերանորոգել հին մասնաճյուղը:

111. ՌԱԵՀ-ի պատվիրակությունը այցելել է նաև ապաստան փնտրողների ընդունման կենտրոնի հարևանությամբ գտնվող բնակատեղի, որտեղ ապրում են փախստականի կարգավիճակ ունեցող անձինք. բնակության պայմանները մասնաճյուղից մասնաճյուղ խիստ տարբերվում են: Իրաքից եկած փախստականներով բնակեցված մասնաճյուղը բարեկարգ վիճակում է: Մյուս մասնաճյուղը, որտեղ ապրում են Ադրբեջանից եկած փախստականները, խիստ անբարեկարգ է: ՌԱԵՀ-ը տեղյակ է, որ նման տարբեր վերաբերմունքը դառնում է այդ երկու խմբերի միջև ժամանակ առ ժամանակ առաջացող լարվածության պատճառ:

112. ՌԱԵՀ-ը նշում է, որ իշխանությունները ջանքեր են գործադրում իրավիճակը շտկելու համար: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում Ադրբեջանից եկած փախստականներով բնակեցված մասնաճյուղի որոշ (բայց ոչ բոլոր) մասերում: Մի քանի ընտանիքներ, որոնք ներկայումս բնակվում են չվերանորոգված բնակարաններում, մոտ ժամանակներս կտեղափոխվեն: Սակայն դա չի վերաբերում Ադրբեջանից եկած փախստականների բոլոր ընտանիքներին, ովքեր ապրում են չվերանորագված մասնաճյուղում:

113. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի իշխանություններն ապահովեն, որ ոչ մի փախստական ընտանիք չապրի Նոր Նորքի կենտրոնի չվերանորոգված բնակարաններում:

114. ՌԱԵՀ-ը նշում է, որ փախստականների բնակության պայմանների հարցը լուրջ մարտահրավեր է իշխանությունների համար: Մեր օրերում Հայաստանը՝ նյութական ծանր վիճակում գտնվող մի երկիր, ստիպված է եղել դիմագրավել մի շարք մեծ փորձությունների՝ ներառյալ երկրաշարժը և փախստականների երկու ալիքները (առաջինը՝ Ադրբեջանից և երկրորդը՝ Իրաքից): Թվում է, որ շատ ավելի թույլ երկրորդ ալիքի հանդեպ դրսևորած վերաբերմունքը եղավ ավելի համարժեք, քան առաջինի ժամանակ: Անցյալում թույլ տրված որոշ սխալներ, ինչպես, օրինակ, քաղաքային բնակիչներին հեռավոր գյուղերում բնակեցնելը, այլևս չկրկնվեցին: Մշակվեց վկայականներ տրամադրելու ծրագիր, ինչը փախստականներին հնարավորություն տվեց սեփականություն ձեռք բերել: Այս առումով հիմնական խնդիրը հանգում էր անշարժ գույքի շուկայում գների տատանումներին. մի շարք դեպքերում տրամադրված վկայականներով

[58] Նրանց պատուհաններին ամրացված չէին երկաթյա ճաղեր՝ խանգարելու համար հնարավոր անկոչ հյուրերին՝ գրոհել ապաստան փնտրողների վրա:

նրանց տերերը հնարավորություն չունեին համարժեք բնակարաններ գնել: Մոտ ապագայում մի նոր նախաձեռնություն տեղ կգտնի. հրավիրվելու է հիմնական դոնորների խորհրդակցություն, որը կքննարկի փախստականներին բնակարաններով ապահովելու խնդիրը:

115. Ինչ վերաբերում է օգնության այլ ձևերին, ՌԱԵՀ-ը գոհունակությամբ նշում է, որ Փախստականների և ապաստանի մասին նոր օրենքը ինքնըստինքյան փախստականի կարգավիճակ է տրամադրում բոլոր նրանց, ովքեր մինչ այդ ունեին ժամանակավոր պաշտպանություն[59]: Արդյունքում նրանք իրավունք ստացան օգտվելու պետության կողմից սոցիալական վճարումների մասին օրենքով նախատեսված աջակցությունից: Նույն իրավունքը Փախստականների և ապաստանի մասին օրենքով տրվել է ապաստան փնտրողներին:

116. Բողոքներ են արտահայտվել նպաստների տրամադրման բազային ծրագրի փաթեթի (ԲԾՓ) աշխատառճի վերաբերյալ, որը շատ փախստականներ և ապաստան փնտրողներ համարում են ոչ թափանցիկ: Շատ հաճախ նրանց համար դժվար է հասկանալ, թե ինչու իրենց կենսապայմաններում թվացյալ խիստ աննշան փոփոխությունները դառնում են ԲԾՓ-ի նպաստներ ստացող անձանց ցուցակից (կոչվում է «Աղքատության գնահատման համակարգի ցուցակ») հանելու պատճառ: Շատերը չգիտեն էլ, որ իրենք կարող են դիմել ՓՄԱԳԼ-ին, որը կարող է օգնել նրանց պաշտպանելու իրենց իրավունքներն այդ հարցում:

117. ՌԱԵՀ-ն առաջարկում է իշխանություններին ստեղծել մի համակարգ, որը կօգնի փախստականներին և ապաստան փնտրողներին «Աղքատության գնահատման համակարգի ցուցակի» հետ կապված նրանց հայցերում:

118. Փախստականները և ապաստան փնտրողներն ունեն անվճար առողջության խմամք ստանալու իրավունք: ՌԱԵՀ-ը ևս մեկ անգամ նշում է, որ շատերն ինչպես հարկն է տեղեկացված չեն իրենց այդ իրավունքների մասին:

119. ՌԱԵՀ-ն առաջարկում է իշխանություններին ստեղծել մի համակարգ՝ տեղեկացնելու համար փախստականներին և ապաստան փնտրողներին առողջության խնամքի հետ կապված իրենց իրավունքների մասին:

120. Փախստականները և ապաստան փնտրողներն ունեն անվճար կրթության իրավունք (մինչև, բայց ոչ ներառյալ, համալսարանական մակարդակ)[60]: ՌԱԵՀ-ը նշում է, որ այդ առնչությամբ որոշ բողոքներ արտահայտել են ազգությամբ հայ Իրաքի քաղաքացիները, ովքեր չեն դիմել ապաստան ստանալու խնդրանքով:

121. Եվ վերջապես փախստականները և ապաստան փնտրողները հոգեբանական աջակցության և լեզվի ուսուցման համար ապավինում են ՓՄԱԳԼ-ի ծրագրեր իրականացնող գործընկերների վրա (ԱՄՆ-ից ստացված ֆինանսական օգնությունը ծախսվել է հենց այս վերջինը ապահովելու համար): Ակնհայտ է,

---

[59] Հիմնականում ազգությամ հայեր, ովքեր փախել են մեծամասշտաբ խնդիրներ ունեցող վայրերից.: Ըստ նոր օրենքի՝ ժամանակավոր պաշտպանությունը մնացել է որպես մարդկանց զանգվածային ներհոսքի հետ վարվելու ձև:

[60] Որոշ համալսարաններ ազգությամբ հայ ոչ քաղաքացիների նկատմամբ դրսևորում են արտոնություններ տրամադրելու միտում:

որ նրանք, ովքեր չունեն բավարար լեզվական հմտություններ աշխատանքի իրենց իրավունքը իրականացնելիս բախվում են դժվարությունների[61]:

122. Ընդհանուր առմամբ ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանում փախստականների և ապաստան փնտրողների խնամքի հետ կապված ծանրության հիմնական մասն ընկած է ՓՄԱԳԼ-ի ուսերին: Դա, իհարկե, կապված է հանրային դրամամիջոցների վիճակի հետ:

123. ՌԱԵՀ-ն իշխանություններին առաջարկում է ստեղծել փախստականների և ապաստան փնտրողների խնամքի հնարավորություններ՝ օգտագործելով մասնավորապես միջազգային այն ֆինանսական աջակցությունը, որ առկա է նրանց տրամադրության տակ:

- *Այլ կարգի ոչ քաղաքացիներ*

124. Համաձայն Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի Հայաստանի մասին 2008թ. Եզրակացության[62], ոչ քաղաքացիների համար գոյություն ունի երեք տեսակի կացության իրավունք՝ ժամանակավոր, մշտական[63] և հատուկ ոչ քաղաքացիներ[64]: Համաձայն օրենքի՝ այս վերջինը վերապահված է հայկական ծագում ունեցող օտարերկրյա քաղաքացիների համար: Ոչ քաղաքացիները կարող են աշխատել Հայաստանում առանց աշխատանքի թույլտվության:

125. ՌԱԵՀ-ը տեղեկացվել է, որ հայ-վրացական սահմանի վրա կա ոչ քաղաքացիներին վարչական կալանքի ենթարկելու միայն մեկ շինություն, որն ունի մի սենյակ: Դա կարող է խնդիրներ առաջացնել հատկապես այն դեպքում, երբ կալանավորները տարբեր սեռի են:

126. ՌԱԵՀ-ն առաջարկում է իշխանություններին հայ-վրացական սահմանի վրա ապահովել կալանավայրի շինության համարժեք պայմաններ:

VI. Քաղաքացիության հետ կապված հարցեր

127. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել է, որպեսզի երկքաղաքացիություն տրամադրելու վերաբերյալ ընդունված որևէ օրենսդրություն խտրականություն չպարունակի էթնիկական կամ որևէ այլ նման հիմունքով:

128. Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են ՌԱԵՀ-ին, որ երկքաղաքացիության մասին օրենք չի ընդունվել. երկքաղաքացիների ունեցած զինվորական պարտականությունների մասը ներկայացված է զինակոչի մասին օրենքում, որը ծառայությունից ազատում է նրանցից ոմանց: Նրանք նաև տեղեկացրել են ՌԱԵՀ-ին, որ ներկայումս իրենք ուսումնասիրում են այն անձանց զինվորական պարտավորությունների հետ կապված հարցը, որոնց երկու ծնողներն էլ ստացել են Հայաստանի քաղաքացիություն (նրանց

---

[61] Ադրբեջանից եկած ազգությամբ հայ փախստականները խոսում են ռուսերեն. նրանք, ովքեր եկել են Իրաքից, խոսում են այն հայերենով, որը պաշտոնապես կոչվում է արևմտահայերեն: Առաջինների երեխաները լեզվական ոչ մի դժվարությյան հետ չեն բախվում:

[62] Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով, Եզրակացություններ 2008 (ARMENIA), Վերանայված կանոնադրության 1-ին, 15-րդ,18-րդ, 20-րդ և 24-րդ հոդվածները, 2008թ. նոյեմբեր, էջ 16:

[63] Սրանք ուժի մեջ են հինգ տարի ժամկետով և որոշակի պայմաններում կարող են երկարացվել միևնույն ժամանակահատվածի չափով:

[64] Սրանք ուժի մեջ են տասը տարի ժամկետով և կարող են երկարացվել:

90%-ը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են և 10%-ը՝ քաղաքացիություն չունեցող անձինք)[65]:

129. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել է նաև, որպեսզի Հայաստանի իշխանությունները Հայաստանի քաղաքացիությունից հրաժարվելու արագ և արդյունավետ ընթացակարգ հաստատեն, որպեսզի նրանք, ովքեր չեն ուզում երկքաղաքացիություն ունենալ, կարողանան այլ պետության քաղաքացիություն ստանալ՝ առանց ենթարկվելու հետապնդման վտանգի, ի միջի այլոց, նաև զորակոչից խուսափելու համար:

130. ՌԱԵՀ-ը տեղեկացվել է, որ կարելի է անարգել հրաժարվել Հայաստանի քաղաքացիությունից, բացի այն դեպքերից, երբ անձը դատապարտվել է քրեական հանցագործության համար, երբ նրան սպասվում է քրեական դատավարություն կամ նա ունի չվճարված պարտքեր, կամ էլ եթե դա կվտանգի ազգային անվտանգությունը:

VII. Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագիծը

131. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն արել է առաջարկություններ, որոնք վերաբերում են `(ա) ստեղծել ոստիկանական անարդարությունների դեմ բողոքներով զբաղվող անկախ մեխանիզմ, (բ) ոստիկանությունում եզդիների և այլ խոցելի խմբերի դեմ խտրականության մասին արված բոլոր հայտարարությունների հետաքննմանը և (գ) ոստիկանական ուժի բազմազան դրսևորումներին:

132. ՌԱԵՀ-ը նշում է, որ ոչ մի անկախ մեխանիզմ էլ չի ստեղծվել: Հատուկ հետաքննությունների ծառայությունը զբաղվում է միայն քրեական բնույթի բողոքներով այն դեպքում, երբ ոստիկանության ներքին ընթացակարգերը, ՌԱԵՀ-ի կարծիքով, չի կարելի որակել որպես անկախ: ՌԱԵՀ-ի համար անկախ մեխանիզմի ստեղծումը առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում, քանի որ կան բողոքներ այն մասին, թե ոստիկանությունն ինչպես է ներգործում կրոնական փոքրամասնությունների վրա:

133. ՌԱԵՀ-ը նշում է, որ պետք է հավաքվեն մանրամասն տվյալներ ոստիկանական ուժերի էթնիկական կազմի վերաբերյալ: Խրախուսում է իշխանություններին շարունակել իրավիճակի դիտարկումը՝ ապահովելու համար, որ ազգային փոքրամասնությունները լինեն համարժեքորեն ներկայացված:

134. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է, որպեսզի ստեղծվի ոստիկանության դեմ բողոքներով զբաղվող անկախ մեխանիզմ: Դա, ի թիվս այլոց, կառնչվի նաև ռասայական խտրականության հետ կապված հարցերին, ինչպես որ այդ հասկացողությունն ընկալվում է ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության թ.7 հանձնարարականում:

VIII. Ռասիզմի և ռասայական խտրականության դիտարկում

135. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկել էր ստեղծել էթնիկական տվյալների հավաքման համակարգ:

136. Ըստ Հայաստանի իշխանությունների՝ վիճակագրական բոլոր տվյալները տարանջատվում են էթնիկական պատկանելիության համաձայն: Սակայն էթնիկական միակ տվյալները, որոնք տրամադրվել են ՌԱԵՀ-ին, վերաբերում

[65] Մեծ մասամբ՝ նախկին փախստականներ: ՌԱԵՀ-ը տեղեկացվել է՝ քաղաքացիություն ավելի հեշտությամբ շնորհվում է ծագումով հայ, քան ոչ հայ անձանց:

են `(ա) քաղաքներում կամ գյուղական վայրերում ապրող մարդկանց քանակին, (բ) ծնունդներին և մահերին և (գ) ներգաղթին և արտագաղթին: ՌԱԵՀ-ի կարծիքով՝ այս ամենը պետք է լրացվի այնպիսի տվյալներով, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր ազգային փոքրամասնության անդամների և ոչ քաղաքացիների ունեցած դերակատարումը մի շարք այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսին են կրթությունը, աշխատանքը, առողջությունը և բնակությունը:

137. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները սիստեմատիկաբար հավաքեն տարակերպ էթնիկական տվյալներ՝ համաձայն ներգրավված մարդկանց անանունության, լիակատար համաձայնության և կամավոր ինքնաճանաչողության սկզբունքների: Այս առումով ՌԱԵՀ-ը հղում է կատարում ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի Ընդհանուր քաղաքականության թ. 1 հանձնարարականի վրա:

IX. Կրթություն

138. Իր երկրորդ զեկույցում ՌԱԵՀ-ն առաջարկություններ էր արել՝ (ա) նախնական և շարունակական ուսուցման մասին, թե ինչպես է պետք ծրագրել կրթության գործընթացը, որը վերաբերում է ռասիզմին և ռասայական խտրականությանը, (բ) պատմության և այլ առարկաների ուսուցումը համապարփակ և ամեն ինչ ներառնող ձևով և (գ) հաշվի առնել աշակերտների միջև եղած բազմազանությունը դպրոցական պարտադիր ուսումնական ծրագրերը կազմելիս:

139. Այս վերջին հարցին ՌԱԵՀ-ը անդրադարձել է ավելի վաղ այս զեկույցում:

140. Հայաստանի իշխանությունների տեղեկացմամբ՝ փոքրամասնությունների խնդիրներին միջնակարգ դպրոցում վերաբերվում են որպես հասարակագիտության և պատմության դասընթացի մի մաս (ներառյալ Հայ եկեղեցու պատմության դասընթացը): Ավելին՝ Կրթության և գիտության նախարարությունը ուսուցիչների համար երկու ձեռնարկ է հրատարակել, որոնցից մեկը վերաբերում է հանդուրժողականությանը, իսկ մյուսը՝ խաղաղությանը և վեճերի խաղաղ լուծմանը դպրոցում: Այս առումով ուսուցումն արդեն իսկ կազմակերպվել է կամ պետք է կազմակերպվի:

141. ՌԱԵՀ-ը խրախուսում է իշխանություններին՝ շարունակել նման ջանքերը: ՌԱԵՀ-ի կարծիքով՝ առանձնապես կարևոր է, որպեսզի փոքրիկներին հիշեցվի, որ կրոնական հանդուրժողականությունը չպետք է հակասի ազգային պատկանելության իրողությանը: Օրինակ՝ աշակերտները պետք է հասկանան, որ անկախ այն ամուր պատմական կապից, որ գոյություն ունի հայ ազգի և Հայ Առաքելական Եկեղեցու միջև, անձը կարող է լինել ծագումով հայ՝ պարտավորված չլինելով լինել վերջինիս հետևորդը[66]: Դա կարևոր քայլ կլինի որոշ չափով թուլացնելու համար ներկայումս գոյություն ունեցող լարվածությունը, որն առկա է կրոնական նոր շարժումների գործունեության շուրջ:

142. ՌԱԵՀ-ը կրկին անգամ առաջարկում է ամեն ինչ ներառնող մոտեցում ցուցաբերել ինքնաճանաչողությանը վերաբերող հարցերին պատմության և հարակից առարկաների ուսուցման ժամանակ:

[66] Հայ կաթոլիկները դրա պատմական օրինակն են:

Միջանկյալ արդյունքների ապահովման

Այն երեք առանձնահատուկ առաջարկությունները, որոնց իրականացմանը ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին խնդրում է գերակա ուշադրություն դարձնել, հետևյալներն են.

- ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի այլընտրանքային ծառայության ժամկետը, քաղաքացիական և զինվորական, անհապաղ կրճատվի վեց ամսով:
- ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ Ազգային փոքրամասնությունների կոորդինացիոն խորհրդի տրամադրության տակ դրվող դրամաշնորհը բաժանելու համակարգը, ըստ որի այն յուրաքանչյուր փոքրամասնության միջև բաշխվում է հավասար չափով անկախ նրանց քանակի՝ չեղյալ համարվի: Այն պետք է փոխարինվի մի այլ համակարգով, ըստ որի դրամաշնորհը պետք է տրամադրվի յուրաքանչյուր ազգային փոքրամասնությանը՝ համաձայն իրենց իրական կարիքների:
- ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները ապահովեն, որ փախստական ոչ մի ընտանիք այլևս չբնակվի Նոր Նորքի կենտրոնի չվերանորոգված բնակարաններում:

Այս երեք առաջարկությունների իրականացման միջանկյալ ուսումնասիրությունը կկատարվի ՌԱԵՀ-ի կողմից՝ սույն զեկույցը հրատարակվելուց ոչ ուշ, քան երկու տարի անց:

Մակենագիկաղթյաղն

Այս մատենագիտությունը պարունակում է Հայաստանի իրավիճակի քննության ընթացքում օգտագործված գլխավոր տպագիր աղբյուրները: Այն չպետք է համարվի զեկույցի պատրաստման ընթացքում ՌԱԵՀ-ին հասանելի տեղեկատվության բոլոր աղբյուրների սպառիչ ցանկ:

European Commission against Racism and Intolerance (ECRI)

1. Second Report on Armenia, 13 February 2007, CRI(2007)1
2. Report on Armenia, 8 July 2003, CRI(2003)36
3. General Policy Recommendation No. 1: Combating racism, xenophobia, antisemitism and intolerance, October 1996, CRI(96)43
4. General Policy Recommendation No. 2: Specialised bodies to combat racism, xenophobia, antisemitism and intolerance at national level, June 1997, CRI(97)36
5. General Policy Recommendation No. 3: Combating racism and intolerance against Roma/Gypsies, March 1998, CRI(98)29
6. General Policy Recommendation No. 4: National surveys on the experience and perception of discrimination and racism from the point of view of potential victims, March 1998, CRI(98)30
7. General Policy Recommendation No. 5: Combating intolerance and discrimination against Muslims, April 2000, CRI(2000)21
8. General Policy Recommendation No. 6: Combating the dissemination of racist, xenophobic and antisemitic material via the Internet, December 2000, CRI(2001)1
9. General Policy Recommendation No. 7: National legislation to combat racism and racial discrimination, December 2002, CRI(2003)8
10. General Policy Recommendation No. 8: Combating racism while fighting terrorism, March 2004, CRI(2004)26
11. ECRI General Policy Recommendation No. 9: The fight against antisemitism, June 2004, CRI(2004)37
12. General Policy Recommendation No. 10 on combating racism and racial discrimination in and through school education, December 2006, CRI(2007)6
13. General Policy Recommendation No. 11 on combating racism and racial discrimination in policing, June 2007, CRI(2007)39
14. General Policy Recommendation No. 12 on combating racism and racial discrimination in the field of sport, December 2008, CRI(2009)5

Other sources

15. Third report submitted by Armenia pursuant to Article 25, paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities, 5 November 2009
16. Committee of Ministers, Monitoring Group (GT-SUIVI-AGO), Report on a visit by a delegation from the Ago Group to Armenia and Azerbaijan (20-25 November 2009), 4 December 2009, CM(2009)180
17. Parliamentary Assembly of the Council of Europe, Honouring of obligations and commitments by Armenia, Resolution 1532 (2007), 23 January 2007
18. Parliamentary Assembly of the Council of Europe, Honouring of obligations and commitments by Armenia, Resolution 1361 (2004), 27 January 2004
19. European Court of Human Rights, Case of Bayatyan v. Armenia (Application no. 23459/03), Judgment, 27 October 2009
20. European Committee on Social Rights, Conclusions 2008 Volume 1, 24 October 2008
21. Report by the Commissioner for Human Rights Mr Thomas Hammarberg on his visit to Armenia (7-11 October 2007), 30 April 2008, CommDH(2008)4
22. European Commission for Democracy through Law (Venice Commission), the Directorate General of Human Rights and Legal Affairs of the Council of Europe and the OSCE/ODIHR Advisory Council on Freedom of Religion or Belief, Joint Opinion on the Law on making amendments and addenda to the Law on the Freedom of Conscience and on Religious Organisations of the Republic of Armenia and on the Law on amending the

Criminal Code of the Republic of Armenia, Opinion No. 530/2009, 23 June 2009, CDL-AD(2009)036

23. European Charter for Regional or Minority Languages, Application of the Charter in Armenia, 2nd monitoring cycle, 23 September 2009, ECRML(2009)6
24. Committee on the Elimination of Racial Discrimination, Reports submitted by States parties under article 9 of the Convention, Fifth and sixth periodic report due in 2004, Armenia, 17 May 2010, CERD/C/ARM/5-6
25. UNHCR, Strengthening Protection Capacity Project South Caucasus, Plan of Action 2009-2011, December 2009
26. UNHCR News, An Iraqi Armenian teen shows the way to a new life, 30 October 2008
27. Organisation for Security and Co-operation in Europe (OSCE) – Office for Democratice Institutions and Human Rights (ODIHR), Handbook on Human Rights and Fundamental Freedoms of Armed Forces Personnel, 2008
28. Karine Soudijan, Head of the Human Rights and Humanitarian Issues Desk, Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, OSCE Human Dimension Implementation Meeting (HDIM), Working session 13, Freedom of religion or belief - Intervention, 7 October 2008, HDIM.DEL/384/08
29. Stepan Danielyan, Vladimir Vardanyan, Artur Avtandilyan, "Collaboration for Democracy" Centre (CFDC), Religious Tolerance in Armenia
30. Written statement on Armenia by the General Counsel of Jehovah's Witnesses, 30 September 2009, OSCE, HDIM.NGO/0119/09
31. Institute on Religion and Public Policy: Religious Freedom in Armenia, 7 October 2008, OSCE, HDIM.NGO/414/08
32. Amnesty International, Armenia – Fear of the freedom of conscience and religion: violations of the rights of Jehovah's Witnesses, 16 January 2008, AI Index: EUR 54/001/2008
33. Forum 18 News Service, Armenia: A "serious setback to the development of a modern, progressive and liberal Armenia", Felix Corley, 24 March 2009
34. Forum 18 News Service, Commentary: The European Court of Human Rights – Out of step on conscientious objection, Derek Brett, 19 November 2009
35. Helsinki Committee of Armenia, Human Rights in Armenia 2009 Report, Ditford Observer #9 (47), January-February 2010
36. Internal Displacement Monitoring Centre (IDMC), Armenia – Need to monitor progress towards durable solutions, A profile of the internal displacement situation, 23 February 2010
37. International Crisis Group, Nagorno-Karabakh: Getting to a Breakthrough, Europe Briefing N° 55, 7 October 2009
38. International Crisis Group, Turkey and Armenia: Opening Minds, Opening Borders, Europe Report N° 199, 14 April 2009
39. Institute for War and Peace Reporting, Armenian Religious Minorities Complain of Discrimination, 13 February 2009, CRS No. 480, available at: http://www.unhcr.org/refworld/docid/499a6f200.html
40. Institute for War and Peace Reporting, Armenia Media Reach Out to Turkey, David Muradian and Sara Khojoian, CRS No. 524, 18 December 2009
41. Institute for War and Peace Reporting, Armenia's Yezidis Bemoan Lowly Status, CRS No. 507, 21 August 2009, available at http://www.unhcr.org/refworld/docid/4a94e31fc.html
42. Liana Sayadyan, The Overall State of Media Coverage of Discrimination Issues in Armenia, September 2009
43. U.S Department of State, International Religious Freedom Report 2009 – Armenia, 26 October 2009
44. U.S. Department of State, International Religious Freedom Report 2008 – Armenia, September 2008
45. U.S. Department of State, 2009 Human Rights Report: Armenia, 11 March 2010
46. U.S. Department of State, 2008 Human Rights Report: Armenia, 25 February 2009